

ՔՅՈՒՉՈՒՔ ԱՐՈՒԹԻՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՔԱՅՄԱՋ ՂՈՒՆՈՒ

ԳՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Հազար հարյուր քառասուն ութը թվին ( $=1735$ ), ախոռապետությունից բարձրացած Մուստաֆա փաշայի և զեապան Ավտիլ Զեքի խանի հետ մեկնեցինք դեպի Իրան:

Ութը ամսում հասանք Իրան: Այն ժամանակ Իրանի շահը Թահմազ Դուլին էր: Սպահան հասանք, բայց Թահմազ Դուլին այնտեղ չէր, գնացել և Ղանտահարը պաշարել էր:

Ավտիլ Զեքի խանը սուրհանդակ ուղարկեց Ղանտահար Թահմազ Դուլիի մոտ թե՛— մեր տեր շահը ինչ կը հրամայե, արդյոք զեապան փաշային (Մուստաֆա փաշային) Զեք մոտ Ղանտահար առաջնորդենք»:

Թահմազ Դուլին պատասխանում է Ավտիլ Զեքի խանին՝ «Հանգրվան հանգրվան հյուրասիրելով, պատվելով Ղանտահար առաջնորդեցեք»:

Թահմազ Դուլին հարցրել էր նաև Ավտիլ Զեքի խանին թե՛ «զեապան փաշան նախքան զեապանության ուղարկվելը Սուլթանի մոտ ինչ պաշտոնի էր»: Ավտիլ Զեքի խանը պատասխանել էր, «գլխավոր ախոռապետն էր»:

Մի քանի օրից հետո Սպահանից մեկնեցինք դեպի Ղանտահար:

Առաջինը հասանք Պեմ, որն Սպահանից 7 հանգրվանի հանապարհ է:

Պեմից գնացինք Եզդ, որը Պեմից 10 հանգրվանի հանապարհ է:

Եզդից մեկնելով հասանք Քիրման, 10 հանգրվան էլ այս հանապարհն է:

Եզդի և Քիրմանի մեջտեղն է գտնվում «Ավազի ծով» կոչվածը (անապատը), որի ավազը ժամացույցի ավազի նման սպիտակ և մանր է: Այս «Ավազի ծով»-ում ընկած էին մի քանի գյուղեր:

Օտարական-ճամբորդը այս գյուղերից անցնելիս, եթե մի գյուղից մյուս գյուղն է նայում, կարծում է ձյուն է եկել, այնպես սպիտակին է տալիս:

Հանապարհի երկարությամբ յուրաքանչյուր  $1\frac{1}{2}$ —2 ժամ հեռավորության վրա կան ուղեհիշներ (միլ), որոնք աշտարակի նման շինություններ են:

Ճամբորդը պետք է գնա այս ուղեհիշների ուղղությամբ, եթե աջ կամ ձախ թեքվեց՝ ճամբան կկորցնի, որովհետև 1-2 միլարեի բարձրությամբ անդունդներ կան՝ որոնց սակայն քամին այնպես է լեցրել ավազով, որ խկի էլ հայտնի չեն: Եթե ձիու ոտքը մանի այս անդունդներից մեկի մեջ, դուրս գալն անհնարին է: Քանի ձին չարչարվի՝ ոտքը այնքան կըխրվի ավազի մեջ: Ահա թե ինչու են այս աշտարակները շինել, որպեսզի ճամբորդը աջ կամ ձախ չթեքվի:

Այս «Ավազի ծով»-ից անցնող ճամբորդների և նրանց անասունների համար հատուկ դիմակներ են շինել, որը ծածկում է մինչև ականջները: Աչքի տեղերը ծվառաք կոչված ապակենման մի նյութից է շինված, որը պատրաստվում է ավազից:

Դիմակը Դիարպեքերի կարմիր կտորի



նման է: Այս գիմակից թե քեզ, թե ձիուդ համար պարտավոր ես գներ «Ավագի ծով»-ի երկու կողմումն էլ՝ թե կղզուս թե Քիրմանուս ծախում են:

Դիմակը՝ լինի մարդու կամ անասունի համար, այնպես է պատրաստված, որ թե քթի և թե բերնի համար լավ հարմարություն ունի և երբեք նեղություն չի առնում: Թահմազ Դուլին բանակը այս «Ավագի ծով»-ից անցնելիս, իրենց պատմելով՝ խիստ քամի է բարձրացել և 1000 քսակի<sup>1)</sup> արժողությամբ անասուն կորել է: Բոլորին չեն էլ փնտսել, վախենալով, որ անդունդների մեջ հանկարծ իրենք կարող են կորչել:

Չմոռանանք նշելու, որ եթե համբոցը մինչև գիշերը չի կարողացել մի դյուղ համսել, պետք է հենց ճանապարհի մեջտեղ էլ գիշերի (հակառակ դեքում կարող է շփոթվել) սրովհետև այն սարը, որ երեկոյան աջ կողմից էր տեսնում, առավոտյան տեսնում ես քամին տարել կիտել է ձախ կողմից: Ինչքան վատ (անհուսալի) կլինեք մարդու դրությունը, եթե հիշյալ աշտարակները չլինեին, սրովհետև քամին ամբողջ ավազը վերցնում և որտեղ որ մի լանջ կա, նրա տուժ կիտում է կղզու նման:

Այսքանը «Ավագի ծով»-ի համար բավական է:

#### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

Քիրմանից մեկնեցինք դեպի Սիստան, որը 10 հանգրվանի ճանապարհ է: Բայց Սիստան չհասած 3-4 հանգրվանի վրա մի ամբողջ երևաց: Գնացինք դեպի այն և այնտեղ տեսանք Չալ Օզլի Ռոստամի սեբունդը, որին պատկանում է խանությունը: Թահմազ Դուլին այստեղից անցնելիս էլ իր կողմից հաստատում է նրա խանությունը:

Այստեղ երեք օր մնացինք: Շատ պատիվ ու հարգանք ցույց տվեց: Ինքը (խանը) շատ լուրջ մի տղամարդ է՝ երկայնահասակ, ոսկրոտ, սև ունքերով, սև աչքերով: Այս տեսակ կազմվածքով և հասակով մարդիկ (ուրում էլինդե) Ռու-

մելիում<sup>2)</sup> շատ կան, սակայն նրա աչքերի նման աչքեր չէի տեսել: Նրանք կովի աչքերից երեք անգամ ավելի մեծ էին: Սոսքս չափազանցություն չհասկանաք, ընդհակառակը ավելի շուտ համեմատությունս ավելի փոքր վերցրի: Մանավանդ մի տղա ուներ 3 տարեկան, բայց 12 տարեկանի չափ էր. այս երեխայի աչքերը հոր աչքերից ավելի մեծ էին երևում, բայց այս երևույթը երեխայի տարիքի հատկություն եմ համարում:

Ինչպես ասացի, երեք օր այստեղ հյուրասիրվելուց հետո մեր ճանապարհը շարունակեցինք դեպի Սիստան:

Ճանապարհը այս կողմերում ամբողջ անապատ է: Պարսկերեն՝ «Եյորկի դիյաղան», թուրքերեն՝ կարծեմ «կուլի դիյաղան» է ասվում:

Սիստանից մեկնեցինք դեպի Դանտահար, 10 հանգրվանի ճանապարհ էլ այս է: Վերջապես հասանք Դանտահար:

Թահմազ Դուլին մեծ հարգ ու պատիվ ցույց տվեց: Մեզ հետ էին Իրանի դիլավոր հրամանատար Աբաուլլահ էֆենդին և Մոսկով Սալահ էֆենդին, որոնց ևս մեծ հարգ ու պատիվ տրվեց:

Իր տեղում տսել էինք, որ դեսպան Մուստաֆա փաշան նախապես Սուլթանի ախտոտակտն էր: Թահմազ Դուլին նրան փորձելու համար իր ունեցած ամենավատ բնավորության ձիուն ուղղում է հեծյունի: Մի օր հրավիրում է իր մոտ և ասում. «Փաշա մի ձի ունեմ, բոլորովին չեմ հավանում, բերեմ հեծի և քո կարծիքը տուր»: Ձին բերում են. թեև երկու կողմից երկու մարդ սանձը բռնել էին, դարձյալ ետևի ոտների վրա էր բարձրանում, եկողին կծում, հետևն անցողին քայիով խփում, մոտ գնացողին առջևի ոտքերով հարվածում. այսպիսի վատ բնավորությամբ մի անասուն էր:

Մուստաֆա փաշան հասկացավ Թահմազ Դուլու նպատակը. Աստված մեծագոր անի, Օսմանյան կառավարությունը, ձախողություն չի ցույց տա, նրա թշնամին թող բարեկամ դառնա: Պետության շահի

<sup>1)</sup> Մի քսակը 500 դրաչ է = ծոսկի — մոտ 43 սուրբի,

<sup>2)</sup> Հարավային Բալղարիան կոչվում էր «Ռումելի»:



պաշտպան (դեսպան) լինելով հանդերձ, լավ էլ ձի հեծնող է եղել: Աստված իմացի, ինքն էլ բարձրահասակ, սննկատեղի կամաց-կամաց մոտեցավ: Ձին ծառս չեղավ: 2-3 քայլ էր մնացել, ձևի բերեց, մի ոտայուն գործեց և խկույն ոտքը գրեց ատղանդակին, նստեց: Ձին էլ զարմացավ, թե ինչ պատահեց: Այն ցատկատուն ձիուն կատու զարձրեց և իջավ: Թահմազ Ղուլին և իր մեծամեծները, բոլորն ակնդետ նայում էին թե՛ տեսնենք դեսպան փաշան ինչպես պիտի հեծնի այս ձիուն: Զարմանքով հետևում էին նրա բոլոր շարժումներին և երբ փաշան հաջողութեամբ իջավ ձիուց, բոլորն էլ հիացմունքով ասում էին: «Այսպես էլ ձի հեծնող լինի»: Ինքը Թահմազ Ղուլին ասաց. «Փաշա Աստված իմացի քեզ, Սուլթանի հացը հաշու լինի քեզ: Այս տեսարանը մենք մեր աչքով տեսանք և մենք էլ հպարտացանք, փառք Աստծո, որ Թահմազ Ղուլի մտածածին պես չեղավ:

Մի քանի օրից հետո մեծապատիվ Մուստաֆա փաշան իր գործերն ավարտելով՝ կրկնակի սրբավայր Ռուսի<sup>1)</sup> ճանապարհը բռնեց: Մենք մնացինք Թահմազ Ղուլի մոտ: Մեզ նվազածունների մեջ տեղ տվեցին: Թե քանի հողուց բաղկացած էր նվազախումբը իր տեղում կը հիշատակենք:

#### ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Այստեղ, նախ և առաջ ձեզ պատմեմ այն մասին, թե Թահմազ Ղուլին ինչպիսի նենդությամբ Ղանտահարը գրավեց:

Մինչև մեր Ղանտահար հասնելը, Թահմազ Ղուլին գրավել էր Բեյխը և նրա շահին գերի էր բռնել, բայց այս մասին նորին մեծություն Մուստաֆա փաշային ոչինչ չէր հայտնել:

Դեսպան Մուստաֆա փաշան մեկնելուց հետո, մի օր, այս գերի շահին իր ներկայութեան կանչեց (ես ինքս ներկա էի և տեսա), երիտասարդ մի մարդ էր, վայելուչ դեմքով, կարճ հասակով, կարմիր երեսով, հեան էլ մեծամեծները:

Թահմազ Ղուլին ասաց. «Լսիր, դուք ամոթամաշիլ չունի՞ք, որ ձեզ ենթակա մի կամ երկու քաղաք ունենալով ձեզ թագավոր անվանում և հպարտանում եք: Բեյխի շահը պատասխանեց.

— Ո՞վ շահ, մեզ ուզեկ անվանել են նրա համար, որ մեզնից յուրաքանչյուր ցեղ, իրարից անկախ, մի երկու քաղաքի վրա խշտեմ է: Հենց ուզեկի հատկանիշն էլ այս է: Թահմազ Ղուլին ծիծաղեց և ասաց. «Լավ, լավ թագավոր ասածդ [ձեզ պես չլինիր] ա՛յ Հնդու թագավորը՝ թագավոր է. Ռուսի<sup>1)</sup> թագավորը՝ թագավոր է, Իրանի թագավորը՝ թագավոր է. ինչու եմ ասում. նրա համար, որ այս թագավորները շատ երկրներ ունեն և եթե թշնամին հարձակվելով մի քանի քաղաքներ գրավի, այնքան էլ մեծ ցավ չէ: Նահանգները շատ, քաղաքները շատ: Հիմա [հասկացած թե ում են ասում թագավոր], ձեր արածը ամոթ է, ամոթ—ասաց, անպատվեց ու հեռացրեց իր առաջից:

Թեև Ղանտահարի գրավումը պիտի պատմէի, բայց վերագրյալը միտքս ընկավ [և որպես հետաքրքիր դեպք] պարտք համարեցի մեջբերում անել:

Ղանտահար ասածդ [դիրքը] մի մեծ լեռ է երկար նստվածքով, շատ բարձր և լերկ (ոլորկ), ուղղահայաց ժայռերով այս լեռան կեսը դուրս թողած, մյուս կեսը բերդ են շինել, իսկ բերդի պարիսպը [այնքան ընդարձակ, որ] վաթսուն հազար մարդ հազիվ կարող է պաշարել: Եթե դրսից բերդի վերևը նայելու լինես, գլխարկդ (ներքե) վար կընկնի: Եթե մեջը ուռմը քցես [բերդի մյուս թաղերում] երեխաները իրենց խաղը կշարունակեն՝ այնքան որ հողերնին չէ [սպանով են]: Ահա այսպես մեծ և բարձր մի բերդ է:

Ժամանակին Զուլբուլ անունով մի շահ է լինում, այս շահը, մեզա ասած, ինքնիքն աստված հայտարարելու հավակնություն է ունենում: Բոլոր անդին քաքերը ծակել տալով, իր մորուքի ամեն մի մազից [մի հաս] կախել է տալիս, այնքան որ հարուստ է լինում. Զուլբուլ—Զմբուլտ շահ անունն էլ այս իրողությունից է մնացել:

<sup>1)</sup> Անտարկում է Պորտ

<sup>1)</sup> Պորտ



Ղանտահարում դժոգք ու գրախտ է շինել տալիս:

Ղանտահարցիների պատմելով՝ հենց այս Զուսթուք շահն է շինել տվել Ղանտահարը:

Ահա այսպես Ղանտահարը մի անմատչելի տեղ է, բայց Պարսկական շահերի տիրապետության ժամանակ Ղանտահարը՝ Ուլադուշից մինչև Պիլեքեր, վրացական խաներին է հատկացվում. նույնիսկ Մուրվիյիզի ժամանակ էլ մի վրացի խանի ձեռքին է լինում:

Հիմա պիտի հարց տաք թե՞ «քանի որ Մուրվիյիզի ժամանակ էլ վրաց խանի ձեռքն է լինում, ապա Մուրվիյիզը ճնց է խլում նրա ձեռքից: Ահա թե ինչպես է խլում:

Մուրվիյիզի ժամանակվա վրացի բեկը մի ուսող-խմող մարդ է լինում, գնում է Ղանտահարի գյուղերը, մի երկու օր ուտել-խմել, քեֆ անելուց հետո, գիշեր ժամանակ, ջահերով դալիս մտնում է Ղանտահար: Սրա քեֆ անելու մշտական ձևը այս է լինում:

Ղանտահարի նահանգի այն ժամանակվա ազգեցիկ բեկերից մեկն էլ Մուրվիյիզն է լինում: Սա ազվաններից շատերին իր կողմն է գրավում, խորհրդակցում են և որոշում այսպես՝ «վրացի խանը գիշերը, ջահերով քեֆից վերադառնալիս հարձակվենք, սրի անցնենք ու Ղանտահարին տեղ կանգնենք»: այս որոշումը միաբանությամբ կատարել, բեկի մարդկանց բոլորին էլ կոտորել և վերջապես Ղանտահարին տիրել են:

Այս լուրը հասել է շահին, շահը զորք է ուղարկել Ղանտահար, բայց զորքի մի քանորդը չի մնացել, այնպես չոր ու ցամաք, ամառի, յետ ընկած, անապատներով ճանապարհներ, ուր կլիման վատ, ջուր չկա. ահա այսպիսի ճանապարհից անցնելով Ղանտահար հասած զորքին հասկանալի է ինչ է վիճակվում: Ազվանը շատվոր, իրա երկրում, իրենց աններից դուրս են գալիս կռվում, եկող զորքին կոտորում: Ինչ մի առանձին դժվարություն կա այսպիսի կռվում Ազվանի համար: Տարիներ շարունակ շահը զորք է ուղարկում, իսկ ազվանները կոտորում են: Շահը տեսնում է հար չկա, Ղանտահարը գրավելուց հույսը կտրում և հրաժարվում է:

Այնուհետև Մուրվիյիզը հետզհետե գործնում, Ղանտահարում խան է դառնում. վերջն էլ Շահի վրա է արշավում: Ահա այս է Մուրվիյիզի ուժեղացման պատճառը:

Գանք մեր հին պատմության թե թահմադ Ղուլին ինչպես գրավեց այս երկիրը (Ղանտահարը):

Թահմադ Ղուլին այս լեռան չորս բոլորը, մեկ թնդանոթի հեռավորության վրա փոսեր է փորել տալիս և այդ փոսերի մեջ, տեղ-տեղ, իրարից կես գնդակի հեռավորությամբ աշտարակներ շինել տալիս և սրանց յուրաքանչյուրի մեջ 5—10 մարդ տեղավորում: Ահա այսպես շրջապատել էր Ղանտահարը:

Մեր պատմության ժամանակ Ղանտահարի խանը Հյուսեյին խանն էր, Մուրվիյիզի տղան:

Թահմադ Ղուլին, բերդից [պարսպից] դուրս գտնվող լեռան մեջտեղ ամենաբարձր մի կետում թնդանոթի դիրք պատրաստել տվեց և հազար ու մի շարժարանքով թնդանոթը հանել տվեց այդ դիրքը: Այդ դիրքի տեղի ընտրության մասին հետևյալ բացատրությունը տվին՝ «Երբ Մուստաֆա փաշան այստեղ էր, Թահմադ Ղուլին նրան տարել է այդ լեռան վրա, որտեղից Մուստաֆա փաշան դիտել է Ղանտահարը և տեսել է, որ այստեղից շուտ կանսվի այս բերդը, որովհետև միայն այստեղից կարելի է բերդը [պարսպը] ուժակոծել, ուրիշ տեղից Ղանտահարը գրավել հնարավոր չէ: Ահա այսպես ասին, մենք չենք լսել, բայց կարող է ասած լինի, որովհետև Մուստաֆա փաշայի զնալուց հետո է, որ Թահմադ Ղուլին սկսեց շինել տալ հիշյալ թնդանոթի դիրքը, սրանով էլ եղրակացրինք, որ ասվածը ճիշտ է, Մուստաֆա փաշայի ցուցումով է թնդանոթները այնտեղ հանել: Բայց դրանից մի ուրիշ անգամ Ղանտահարը այս տեղից է գրավվել: Այստեղ մի բուրջ կա որը «Դադա բուրջի» է կոչվում: Առաջին գրավման ժամանակ էլ ահա այս բուրջի կողմից են մտել:

Այս անգամ էլ նույն այս կողմից բսկըսան թնդանոթի հարվածներով բերդի [պարսպի] պատը քանդել: Քանդեցին և զինվորները սրոշեցին հետևյալ օրը հարձակու-



մով ներս մտնել: Բայց լույսը բացվելուն, տեսան բերդի [պարսպի] քանդված մասը շինվել է պաշարվածների կողմից:

Միառժամանակ, այսպես՝ պարսիկները ցերեկը քանդելով, Ղանտահարցիք գիշերը քանդվածքը շինելով՝ հար չգաան ներս մտնելու:

Թահմաղ Ղուլին իր զորքին տրեխներ պատրաստել տվեց և (պատվիրեց) հրամայեց՝ «վաղը բերդում [պարսպում] թնդանալի հարվածներից անցք բացվելուն պես, անմիջապես հարձակվեք և ներս խուժեք, մի անգամ ներս մտնելուց հետո հեշտ է գրավել»:

Թահմաղ Ղուլիի զորքը այս ծրագրով պատրաստվեց և սկսեց բերդը [պարսպը] ուժակոծել: Մի կողմը քանդեցին և հարձակվեցին, բայց աղվանները նախապես ներսից պատրաստվել են՝ պարխապների վրա քարեր են շարել: Պարսից զորքը երբ բարձրանում էր այդ ձիւք լեռան կեսին, աղվանները պարսպից քարերը հանետում էին, և որովհետեւ բարձրացած լանջը հող չէր որ քարը թաղվեր, այլ լերկ ժայռ, քարը նետվելուն՝ երկու երեք մարդ սպանում և զորվելով ընկնելիս՝ հինգ-վեց մարդ էլ վիրավորում էր: Այսպես թէ այնպես, այդ օրը մինչև երկու սպանվածներ և վիրավորներ տալով չկարողացան բերդը գրավել:

Թահմաղ Ղուլին մտածեց նենդությամբ գրավել Ղանտահարը:

Պատգամավորներ ուղարկեց Հուսեյին խանին, թե՛ թող գա ինձ տեսնելու, ես նրան շատ պատիվ-հարգանք կտամ: Ոչ մի ֆրաս չեմ տալու ոչ Հուսեյին խանին և ոչ էլ նրա մարդկանց: Գրություն (բազամ) կտամ, կերդվեմ, որովհետեւ երկու մուսուլման իրար ջարդեն վայել չէ: [Երկրորդ] լսել եմ նաև, որ ձեր պատրաստությունն ու պաշարը շատ են, երեք չորս տարի կարող եք դիմանալ, բայց եթե կարծում եք, որ այդպես ներսը փակված մնալով ես կը թողեմ և կը հեռանամ, կը սխալվեք: Տասը

տարի կապահեմ այստեղ և մինչև չնվաճեմ չեմ հեռանա:

Պատգամավորները գնացին Հյուսեյին խանի մոտ:

### ԴԼՈՒԽ ԶՈՐԲՈՐԴ

Պատգամավորները գնացին Ղանտահար, հայտնեցին Թահմաղ Ղուլու առաջարկները: Ղանտահարցիք հավաքվելով առաջարկները քննում, երկու կարծիքի են բաժանվում: Մի մասը ընդունելի է գտնում առաջարկությունը, մյուս մասը՝ անընդունելի և վատ հետևանքներով լի: Բայց վերջապես ընդունում են պայմանով, «որ Թահմաղ Ղուլին գրություն (բազամ) գրի և իր կնիքով կնքի, որ մեզ ոչ մի ֆրաս չի տալու, միայն այս պայմանի կատարումով կզանք Թահմաղ Ղուլիի մոտ» — ասացին Ղանտահարցիք պատգամավորներին:

Թահմաղ Ղուլին պատգամավորներից լսելով Ղանտահարցիների պահանջը՝ ասաց՝ «շատ լավ թող գրություն գրվի. գրեցին, ստորագրեց, կնքեց և այսպիսով վստահացրեց Հյուսեյին խանին, որ իր կողմից ոչ մի ֆրաս չի հասցնելու ոչ անձամբ իրեն՝ Հյուսեյին խանին, ոչ նրա խաներին, ոչ բեկերին և ոչ էլ բերդում գտնվողներից որեւէ մեկին»:

Ղանտահարցիք կարգացին և հավանություն տալով հանձնվեցին, եկան Թահմաղ Ղուլիի մոտ (խաքը փայլեց):

Հետևյալ օրը, Թահմաղ Ղուլին Հյուսեյին խանին (ղաֆտան) հազցրեց, գովեց նրան — ասելով... ապրիս, ապրիս խան, գոհություն աստուծո (բերեք թիւլահ) [խելոք վարժունքիդ համար]: Պատվեց և խալաթներ հազցուց Հյուսեյին խանի հազարապետներին, առաջարկեց քսան դուրուշ<sup>2)</sup> ամսականով իրա մոտ ծառայության մասեր: Նրանք էլ խորին շնորհակալություն հայտնելով ավելացրին... «տեք իմ հոգով-մարմնով թո՛ւ ծառաներն ենք»:

Ահա այսպես Ղանտահարը հանձնվեց:

Մի քանի օրից հետո Թահմաղ Ղուլին իր մոտ կանչելով Հյուսեյին խանին, հայտնեց՝ մեր շահը [իր կողմից բանտարկված

<sup>1)</sup> Բնագրում գրված է պատվիրեց (թեքիհ):

<sup>2)</sup> Հարյուր դուրուշը — մի տասկական սուկի է



Թահմազ շահը՝ մի գրությամբ հետեյալ հրամանն է ուղարկել՝ «Լսել եմ, որ Մուրվիյիդի տղա Հյուսեյին խանը Ղանտահարը ձեզ հանձնել և ինքն էլ ձեզ մոտ է եկել, արդյոք ինչպիսի մարդ է, ցանկանում եմ նրան տեսնել»։ Թահմազ Ղուլին ավելացրեց՝ «Եր շահի ցանկությունը կատարելու համար քեզ նրա մոտ եմ ուղարկելու»։

Հյուսեյին խանը հարցրեց Թահմազ Ղուլիից՝ Տեր իմ, արդյոք շահը մեզ չի փնտրելու։ Թահմազ Ղուլին պատասխանեց. «Բարբորովին մի վախեցիր քեզ ոչինչ փնտրի անի»։ և մի քանի հայրուր զորքով Հյուսեյին խանին ուղարկեց Սեպիվար քաղաք՝ շահ Թահմազի մոտ։

Հյուսեյին խանին ուղարկելուց հետո, Թահմազ Ղուլին, հատուկ գրությամբ սուրհանդակ ուղարկեց շահ Թահմազին, ուր նրան գրում էր՝ «Ձեզ մոտ եմ ուղարկում Մուրվիյիդի տղա Հյուսեյինին, որի հայրը ավերել է քո երկիրը և սպանել քո հորն ու եղբայրներին։ Ուղարկում եմ նրա համար, որ դու էլ քո հոր և եղբայրների վրեժը նրանից առնես»։

Շահ Թահմազը ստանալով Թահմազ Ղուլիի նամակը, կարդաց և ասաց. «Ինչ եմ անում Մուրվիյիդի տղա Հյուսեյինին, ինքն է ինձ բանտարկել, երկիրս սուկ, տեր ու տիրական դառել, մի դունդ անաստվածներին ինձ վրա պահակ կարգել, նեղութուն են տալիս, խոսքս չեն լսում, բանտում եմ, ինքն էլ Մուրվիյիդի պես անսիրտ-անգութի (զալիմ-զալիմ) մեկն է։ Մուրվիյիդի տղան է ուղարկում ինձ, իբր թե մի հաղվագյուտ նվեր է ուղարկում։ Եթե իմ բարին ցանկանում է, ինձ բանտից թող ազատի, շահությունը իրան լինի, ինձ մի կտոր տեղ հատկացնի, որպեսզի գնամ իմ ընտանիքով, երեխաներով մի կտոր չոր հաց ուտեմ, աստծուն աղոթեմ և այս անաստվածների երեսը չտեսնեմ»։ Այսպիսի լքովանդակությամբ պատասխան գրեց ու ուղարկեց Թահմազ Ղուլիին։

Թահմազ Ղուլիի ուղարկած սուրհանդակը դեռ Թահմազ Ղուլիին չէր հասել չէր վե-

րադարձել, Հյուսեյին խանը Թահմազ շահի մոտ հասավ։ Շահը հարցրեց և իմացավ, որ Թահմազ Ղուլիի ուղարկած մարդն է և առանց խոսելու, առանց մի բառ ասելու՝ դուրս վճռեց Հյուսեյին խանին իր մոտից։ Սա նա էլ առանց մի խոսք ասելու դուրս եկավ։

Հյուսեյին խանին Թահմազ շահի մոտ ուղարկելիս, Թահմազ Ղուլին նախապես պատվիրել էր իր մարդկանց, որ եթե շահ Թահմազը չսպանի Հյուսեյինին, մի քանի ժամվա ժանապարհ հեռացնելով քաղաքից, (Սադրիվարից) իրանք սպանեն։ և սպանեցին։

Դառնանք Ղանտահարի առնվելուն։

Թահմազ Ղուլին տասներ ութը ամիս պաշարելուց և նենգությամբ քաղաքը գրավելուց հետո, Ղանտահարի դիմացի գաղտնի նոր Ղանտահար շինեց, հին քաղաքի բերդը, պարիսպը, տները քանդեց աֆղեա ավերակ դարձրեց, աֆղեա լեռան լանջը մերկացրեց, որ կարծես այստեղ շինություն չի եղել։

Քաղաքի գույքն ու կայքը գրավեց, իսկ ժողովուրդը տեղափոխեց նոր քաղաք, տեղն մեկին հող հատկացրեց։ Նոր քաղաքի կարգ ու կանոնը հաստատելուց հետո իր զորքը քաշեց Հինգու վրա։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԳ

## ԹԱՀՄԱԶ ՂՈՒԼԻԻ ԴԵՊԻ ՀԻՆԴ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես պատմեցինք, Թահմազ Ղուլին Ղանտահարը գրավելուց, նոր Ղանտահարի կարգ կանոնը հաստատելուց հետո, դեպի Հինգ ճանապարհվեց։

Առաջինը՝ զորքը քաշեց Քելաթ անունով երկրի (քաղաքի) վրա։

Եթե Քերքյուք քաղաքը տեսել եք, այս Քելաթ քաղաքի դիրքը ճիշտ նրա նման է, շինված՝ մի լեռան գագաթին, կամ Քերքյուքն ևս տեսել կամ Քելաթը։ Տասը հազար աղվան ընակիչ ունի։

Թահմազ Ղուլիի դեմ պատերազմեց,



դնդակը<sup>1)</sup> սպասակեց, սկսեցին սրով կովել, սրերը կտոր կտոր եղան, հրացանների կոթերով սկսեցին կովել, հրացանի կոթերն ալ ջարդվեցին, սկսեցին քարերով կովել, ոչ ոք կովից չխուսափեց, մինչև բոլորը ուժաստու ընկան, և այս տասը հազար աղվանից ոչ ոք չփախավ և ոչ ոք գերի չընկավ, բոլորը կոտորվեցին, բայց զըզըլ-բաշները (պարսիկները) շատ զոհ տվեցին: Թանձաղ Ղուլին Քելաթի բերդը քանդեց, այնպես հասկացեք, որ հողի հետ հավասարեցրեց: Կոտորվող տասը հազար աղվան գործից մեկի գանգը չափեցի երկու թղաւ չափ եր:

Թանձաղ Ղուլին այս տեղից առաջացավ գետի Մանձուտի Ղազնի: Սրանք չընդդիմացան և անմիջապես հանձնվեցին: Թանձաղ Ղուլին այցելեց Մանձուղ Ղազնի դամբարանն ու այստեղից ել առաջանալով հասավ Քապուլ և պաշարեց:

Քապուլում ոչ ոք թանձաղ Ղուլին չընդառաջեց, 7—8 օր անցավ, ձայն-ձուռն չկա: Թանձաղ Ղուլին կասկածեց, չլինի քապուլցիները մի խորամանկութուն են մտածում իրան դեմ, նրանք ներսն են, իսկ ինքը դուրսը:

Քապուլի առաջը այգիներ են՝ շատ խիտ ծառերով, հովասուն, այնպես քեֆի (զվարթացուցիչ) տեղեր, որ այս ծառերից քաղաքը բոլորովին անտեսանելի է:

Թանձաղ Ղուլին սկսեց ծառերը կտրել տալ: Այգիներն ու ծառերը կտրել տալուց հետո բանակատեղից բերդի [պարսպի] մի մասը երևաց: Մի քանի տներ կային բերդի ճանապարհին, վառեցին՝ քար ու քանդ արին: Ներսից լուր եկավ, որ հեռեւայլ առավոտ կտրվ են տալու, չորս հայրուր միլթանիներ [խաւմության աղանդավոր?] քանը հինգահան դահեկանի սրամարտիկ են գրվել: Թանձաղ Ղուլին ևս պատրաստվեց:

Հետեւյալ օրը բերդի [պարսպի] դռները բացվեցին, միլթանիները հաշիշով օշարակը խմած՝ վահանը ձեռներին, մերկ սրերով, հետիոտն դուրս եկան: Թանձաղ Ղուլիի զորքը ձիավոր, նրանք հետիոտն:

Թանձաղ Ղուլին ևս փախչելու հրաման արձակեց: Զորքը ևս նահանջեց: Այս չորս հարյուր միլթանիները հետադուրեցին թանձաղ Ղուլիի գործերին, որոնք նահանջեցին այնքան, որ այս հիմար հարձանքին դուրս քաշեցին ծառերի, այգիների սահմանից, հասցրին մինչև հարթավայր: Թանձաղ Ղուլին հարձակման հրաման տվեց: Նահանջողները միլթանիներին շրջապատեցին—բռնեցին, հավաքեցին: Եւրոպիկ իմ աշակերտներիցս մեկը, որ դիտելու էր գնացի, երկու հողի վերջներով մեր վրանը բերեց, խոսեցինք և քաղաքի մասին էլ տեղեկութուններ վերցրինք:

Վերջի վերջո, առանց մեկի քիթն արհեստելու, քաղաքը հանձնվեց Թանձաղ Ղուլին՝ քաղաքապետի միջոցով, խանը չկար, փախել էր: Թանձաղ Ղուլիի հարցին թի՛ «ո՛ւր է այս քաղաքի խանը»՝ քապուլցիք պատասխանեցին, «Տե՛ր իմ, Զալալարաթ փախավ»:

Թանձաղ Ղուլին յոթն հոգուց բաղկացած պատգամավորութուն ուղարկեց Զալալարաթ՝ Քապուլի խանին, որ զա հանձնվի, բայց նա պատգամավորներից վեցը սպանեց՝ յոթերորդի քիթն ու ախանջները կտրելով՝ ևս ուղարկեց:

Թանձաղ Ղուլին սրանեղած բանակը քաշեց Զալալարաթի վրա, բայց խանին այնտեղ չգտավ: Բարկանալով՝ քաղաքի մինչև կատուներն ու շները սրի քաշեց և քաղաքն էլ հրկիզեց, մոխիր դարձուց այնպես, որ կարծես ոչ մի շինութուն չի եղել այստեղ: Անցնող-դարձողները որեւէ մի բանից չէին կարող եզրակացնել, որ այստեղ Զալալարաթ քաղաքն է եղել:

Բայց ձեզ զարմանալի մի բան պատմեմ: Քապուլ քաղաքում տասնը վեց հաւ թնդանոթ կար, որոնց Լանկ-Թեմուրն էր ձուլել տվել: տասնը վեցն էլ այնպես գեղեցիկ, այնպես համաչափ, այնպես բարեձև՝ կարծեք նոր էին ձուլվել: մենք ամեն օր դիտելու էինք դ՛ուռմ, ամեն մեկի երկարութունը տասնը հինգ-տասնը վեց արշին [10—11 մետր], բոլորի վրա ռուսի<sup>2)</sup> լեզվով փորագրութուններ կային: Քապուլցիք շատ են

<sup>1)</sup> Այդ դարում փողից լցվող հրացաններ էին կաղարն գնդակով:

<sup>2)</sup> Լատիներեն կամ հունարեն:



աշխատել այս թնդանոթներին մեկը բեր-  
դի գլուխը հանել թահմազ Ղուլիի զինվոր-  
ներին ահաբեկելու<sup>2)</sup>, բայց չեն կարողացել:  
Թահմազ Ղուլին ուզեց այս թնդանոթները  
Պարսկաստան տանել, բայց նա էլ չկարո-  
ղացավ և որովհետև ավելի ևս առաջ պի-  
տի գնար, քաղույցիների մոտ այս թնդա-  
նոթները թողնել չուզեց, վախենալով, որ  
իր հետևից կարող է խփեն, ուստի, ճարա-  
հատյալ կտոր կտոր արեց այդ զարմանալի  
թնդանոթները և փոքր թնդանոթներ՝ ձու-  
լիլ տվեց:

Ջալալապատ քաղաքը (ինչպես վերև  
պատմել էինք) հողի հավասարեցնելուց հե-  
տո, Թահմազ Ղուլին դորքը շարժեց դեպի  
Խալեբ կիրճը: Այս կիրճի մի ծայրից-մյու-  
սը քսանը չորս ժամ է քաշում: Կիրճի  
մյուս ծայրում՝ Փեշավար քաղաքի՝ Նասր  
խանը իր դորքով դիրք բռնել, սպասում էր:

Թահմազ Ղուլին կիրճի այս կողմում  
մտածում էր, թե արդյոք թնդ կարող է  
անցնել, տեղ կա, որ հաղթվ մի ձե կարող  
է անցնել, տեղ կա՝ տասը ձի: [Այդ միջոցին՝  
մի լրտես եկավ, և հայտնեց Թահմազ Ղուլին  
թե՝ «Շահն, ձեզ անցնելու մի ճանապարհ  
կա, բայց զժվարանցանքի է, միայն ուղիով  
մարդը [հետևակը] կարող է գնալ, ձիով ան-  
կարելի է»: Թահմազ Ղուլին հետաքրքրվեց,  
թե ուր է տանում այդ ճանապարհը: Լրտե-  
սը թե՝ Նասրը խանի դիրք բռնած կետից  
մեկ և կես-երկու ժամ ավելի ներս:

Թահմազ Ղուլին արեխներ կարել տվեց,  
ցորենը բովել տվեց, ձիերն ալ քաշելով՝  
դորքի մի մասը հեռան առավ ու լրտեսի  
ցույց տված ճանապարհով առաջացավ:

Առավոտյան դեռ լույսը բացվելուն եր-  
կու ժամ մնացած՝ դուրս եկան մի հարթա-  
վար, որ Նասրը խանի կիրճի ծայրում  
բռնած դիրքից մեկ-երկու ժամով էլ դեպի  
ներս էր:

Իսկ Նասրը խանը, կիրճի ծայրում, հան-  
գիստ քնի մեջ էր: Կարծելով, թե Թահմազ  
Ղուլիի համար այդ անմատչելի ճանապար-  
հով [լրտեսի ցույց տվածով] անցնելն ան-  
կարելի է, Նասրը խանի դորքն առք փա-  
ռք հանվել, հանգիստ քնել էր:

Թահմազ Ղուլին իր հեռ տարած՝ դոր-  
քին պատվիրեց, որ թե՝ հիմի հերոսներ,  
օրն այս օր է, եթե ընկճվեցինք, ոչ մեկս  
ողջ չի մնա: Աղոթեցին և հեծան ձիերը:

Կիրճի ծայրում Նասրը խանը դեռ քնի  
մեջ էր:

Թահմազ Ղուլին վրա տվեց և Նասրը  
խանին էլ վիրավորեց. երեք բլուր մար-  
դու գանգ հավաքել տվեց: Կիրճը բանալով  
լուր ուղարկեց, որ բանակն անցնի: Ես,  
ձեր ծառա Թամբուրի փոքրիկ (քյուչուք)  
Աբութինն էլ այդ բանակի հեռն էի: Հա-  
սանք կիրճի մեջ տեղը, քնեցինք. ինչպես  
վերև հիշել էի, կիրճի մեկ ծայրից մյուսը  
քսանը չորս ժամվա ճանապարհ է, մի օրում  
չէինք կարող անցնել: Հետևյալ օրը երե-  
կոյան դեմ դուրս եկանք կիրճից, տեսանք  
Չարդել, կոտորել, երեք բլուր գանգ են հա-  
վաքել:

Երեք օր հետո Թահմազ Ղուլին դիվան  
կազմեց և իր ներկայությամբ կանչելով Նա-  
սրը խանին՝ ասաց. «Թահմազ Ղուլին կիրճը  
լավ բացավ, խան»:

Խանը պատասխանեց. «Ձե՛ շահ, արիու-  
թյամբ չբացիր, այլ խարդախությամբ»:

Թահմազ Ղուլին ասաց. «ձիշա՛ ասացիք  
խան, բայց այս այնպիսի մի կիրճ է, որ  
միայն մի անգամ մեծ մարդարէ Ալին  
(հազրեթի Ալի) հաղթահարել է: Բայց  
տղամարդության իննը մասը խարդա-  
խություն է, միայն մեկը արիություն,  
առանց խարդախության քաջություն չի  
լինի» — ավելացրեց Թահմազ Ղուլին:

Ինչպես վերև հիշեցինք՝ Նասրը խանը  
վիրավորվել էր: Թահմազ Ղուլին վիրաբու-  
քերել տվեց, հարգանք-պատիվ ցույց տվեց,  
մուշտակ հաղցուց և նորից Փեշավար քա-  
ղաքի խան կարգեց:

Մեծ քաղաք եր Փեշավարը և Թահմազ  
Ղուլին բավական ժամանակ մնաց: [Այդ  
միջոցին՝ Աթալ գետակին մարդիկ հառ-  
կացրեց, ջիսերներ (լաստ) կապել տվեց:

Աթալ գետակը անցանք, այնտեղից մի  
քանի քաղաքներ էլ մտանք, բայց տնուն-  
ները մոռացել էին:

Ջեյհուն կոչվող մեծ գետը հասանք, որը  
անցնում է (Քիշմիրէ աքար) Քիշմիրի կող-  
քով, լայնքը Պոլսո Բախչե-Գարուից մինչև

<sup>2)</sup> Բնագրում խրանցնելու (խրթնթմեք):



Ղալաթա [սոկեղջյուր] կլիներ: Դեռ մենք Քիշմիրից մի քանի օրվա հեռավորութիւն ունեյինք, Քահմազ Ղուլին (թոմարներ) նսովեր, (շիսերներ) շինել տվեց և մենք Ջեյհուն գետը այնպես անցանք:

Ջեյհուն գետը անցնելուց հետո Լահոր հասանք: Այս Լահորի խանի մի արարքը պատմեմ, քայց զարմանալի մի վարմունք է: Դեռ մեր առաջապահը Լահոր չհասած, — իսկ մեր առաջապահը ով էր գիտէր, Հաճը խանն էր, — Լահորի Բահատուր խանը քաղաքի և գյուղերի իր ցեղակիցներին լուր է ուղարկում, թե՛ թշնամին գալիս է, արեք քաղաք մտեք որպէսզի չվնասվենք: Այս հրամանին ոմանք ենթարկվել զնացել են, ոմանք չեն վնացել, մինչ այդ Հաճը խանը հասնում է չգնացողներին, որոնք դիմադրում են, քայց Հաճը խանը մի քանիսին կոտորում է:

Այս միջոցին մի լրտես է գալիս Քահմազ Ղուլիի մոտ և ասում. «Իմացած եղիր Ծահա, սրան Բահատուր խան են ասում, յոթանասուն-ութանասուն հազար ձիավորով է դուրս գալիս, սա Հինդու մեջ հուշակ ունի»։ Քահմազ Ղուլին պատասխանում է. «Աստված ողորմած է, աստված կամ մեզ կտա (հաջողութիւնը), կամ նրան»:

Ամբողջ բանակով Լահորի դեմ գնացինք, վրանները խփեցինք նստեցինք: Նրանք էլ բերդի դռները փակել ներսը նստել են:

Երեք շօր սպասեցինք: Չորրորդ օրը Բահատուր խանը մի քանի պատգամավոր ուղարկեց, որոնք հայտնում են, թե, — Բահատուր խանը ցանկանում է Ծահի [Քահմազ Ղուլիի] հետ տեսակցել. Քահմազ Ղուլին պատրաստակամութիւն է հայտնում:

Հաջորդ օրը Բահատուր խանը 80 հազար ձիավորով դուրս եկավ [բերդից], ասացին Բահատուր խանը՝ գալիս է. Քահմազ Ղուլին թե՛ թող գա, արգելք չկա:

Բախչէ Դափուից Սամաթիա հեռավորութիւն վրա (մոտ երկու-երեք կիլոմետր) դորքը թողեց, իսկ ինքը Բահատուր խանը երեք ձիավորով առաջացավ դեպի Քահմազ Ղուլին. մի գնդակի հեռավորութիւն վրա ձիուց իջավ, այդ երեք ձիավորներին էլ այնտեղ թողեց և ինքը գետնի վրէժը քարե սալով հասավ Քահմազ Ղուլիին: Քահմազ

Ղուլին նրան ընդունեց՝ «հրամեցնք» ասելով, իսկ Բահատուր խանը նրան պատասխանեց «Ծահա» բացականչութիւնով:

Տեսակութիւն միջոցին Քահմազ Ղուլին Բահատուր խանին հարց է տալիս. «Խան, քո մասին ինձ հայտնեցին, թե քաջ ազամարդ է, կովող և զորքն էլ շատ, հապա ինչու չկովեցիր»:

Բահատուր խանը պատասխանում է. «Ճիշտ ևս ասում, Ծահա, միայն պատերազմ չանելուս պատճառը հետևյալն է՝ Մենք երեք եղբայր էինք, մեր հայրն էլ խան էր, շատ գիտուն և բանիմաց մարդ, մենք երեք եղբայրներս էլ երիտասարդ էինք: Հայրս ամեն օր և ամեն ժամ մեզ խրատում և ասում էր. «Իրանի կողմից մի տղամարդ պիտի երևան գա, տղաներս, ևս կմեռնեմ, դուք ողջ կմնաք, եթե այդ տղամարդը ձեր ժամանակ երևան գա, նրան չդիմադրեք, կվնասվեք, եթե հարգեք, նա էլ ձեզ կհարդի ու կը պատվէ»: Հայրս միշտ խոսում էր այս մասին: Հիմա մեր շահը որ երևան եկավ, ևս մտածեցի, արդյոք հորս խրատին հետևեմ թե ոչ: Վերջի վերջո ևս եզրակացրի՝ «Հոր խոսքը լսելը լավ է. հոր խրատին հետևողը վնասով դուրս չի եկել»: Ահա թե ինչու չպատերազմեցի, Ծահա»:

Քահմազ Ղուլին «մաշալլահ» բացականչութիւնով գովեց Բահատուր խանին և ավելացրեց. «Աստված լուսավորե ձեր հոր հողին, շատ իմաստուն և բանիմաց մարդ է եղիլ, ճիշտ որ ձեր հոր գուշակած տղամարդը ևս եմ»:

Քահմազ Ղուլին խալաթ է հագցնում Բահատուր խանին և ասում է. «Քեզանից ոչ նովեր եմ ուզում, ոչ էլ քո ունեցվածքից մի քանի կարիք ունեմ. ևս ավելի առաջ պիտի գնամ, դու միայն պաշար հասցուր ինձ»:

«Վլիխ վրա Ծահա» — պատասխանում է Բահատուր խանը:

Ահա այս է Բահատուր խանի վարմունքի մասին լսածս, ճիշտ է թե ոչ, համենայն դեպս շատ լավ արեց, առանց մի կաթիլ ալյուրն թափելու ապահովութիւն ստացավ և քաղաքի խանութիւնն ալ էլի իրան տրվեց:

Քահմազ Ղուլին մոռնեալի կանչել տվեց



իր զորքի մեջ՝ «Վայ այն մարդուն, որ Լահոր քաղաքը գնալուն մի կողմիցի մնաս կամ թալանչություն կանի: Ով ուզում է բանակից կարող է քաղաք գնալ՝ առևտուր անել, իսկ քաղաքից էլ ով ուզում է կարող է բանակ դալ՝ և առևտուր անել»:

Ես, նվաստ (Ֆադիր), փոքրիկ Արուսիկս, բանակի շուկայում ման գալիս, հանկարծ սրերի ձայն, խառնաշփոթություն փրթալ, տեսա Լահորի մարդկանց սուր են քաշում: Թահմազ Ղուլին հրամայում է կարգապահության պետին՝ բոլորին բռնել բերել, նա էլ մոտ չորս հայրուր հողի բռնում բերում է Թահմազ Ղուլիի առաջը:

Թահմազ Ղուլին հրամայում է տանել բոլորին էլ դիմատել: Իսկ երբ կարգապահության պետը հայտնում է, թե՝ «Շահ, մեղավոր անմեղ բոլորին բռնել բերել եմ» — Թահմազ Ղուլին ավելացում է, «տար մեղավորին սպանիր, անմեղին բաց թող»: Կարգապահության պետը տանում մեղավորին սպանում, անմեղին բաց է թողնում և բանակի մեջ կարգը հաստատվում է:

#### ՔԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Լահորից հետո Թահմազ Ղուլին ավելի առաջացավ դեպի Ճիհանապատ:

Լրտեսը տեղեկացրեց, որ. — Շահ, Մեհեմետ շահն իր ամբողջ զորքով Ճիհանապատից դուրս եկավ դիմադրելու:

Թահմազ Ղուլին հասավ Սերի հինու: Մի քանի քաղաքներ էլ մասնք, բայց անունները խրթին լինելուն մտքումս չեն մնացել:

Սերիհինան անցանք և Թահմազ Ղուլին մտնեցավ Մեհեմետ շահին: Մեհեմետ շահը Ճիհանապատից 6—7 հանգրվանի ճանապարհ առաջ էր եկել, դիրքեր բռնել, թնդանոթները տեղավորել, խրամներ փորել, բերդեր ու աշտարակներ շինել ավել:

Թահմազ Ղուլին իր ամբողջ բանակով հեռվից շրջապատւյա կատարելով՝ Մեհեմետ շահի կտեն անցավ: Օրինակ, ասենք թե Ճիհանապատը Էտիքնեն լինի և Մեհեմետ շահն իր բանակով դիրք է բռնել Ստամբուլում, իսկ Թահմազ Ղուլին գալիս է Իզմիրի վրայով, պետք էր սպասել, որ Սկյուտար կնամնի և այստեղ տեղի կունենա պատերազմը: Բայց այդպես չեղավ. Թահմազ Ղու-

լին իր բանակը առաջնորդեց «կղզի»-ների վրայով դեպի Քյուչուք չեքմենե և այստեղ դիրք բռնեց:

Դիրքերը այնպես էին դասավորվել, որ Թահմազ Ղուլին ավելի մոտ էր Ճիհանապատին և կարծես Թահմազ Ղուլին լինեք Ճիհանապատից թշնամու դեմ կռվելու դուրս եկողը, իսկ Մեհեմետ շահը օտար, հեռու տեղից եկած և հարձակվող: Այսպես ուրեմն Թահմազ Ղուլին Ճիհանապատի (մայրաքաղաքի) և նրա թագավոր Մեհեմետ շահի բանակատեղի արանքում դիրք էր բռնել, այնպես որ Մեհեմետ շահը իր մայրաքաղաքից հեռու էր մնացել:

Կարող եք հարց տալ թե՝ հապա մնց այդպես շուրջանց կատարեց, ասեմ. «այդ երկիրն իմ բերած օրինակի նման մի կողմը ծով և մի կողմը ցամաք չէ. լայն ու ընդարձակ մի հարթավայր է, որտեղ երկինքը կարծես մի պնակի կախարիչը լինի այնպես հավասար ծածկած է երևում: Թահմազ Ղուլին ուղիղ թշնամու վրա չգնաց այլ կողքանց անցավ նրա թիկունքը. թե մենք, թե նրանք իրար տեսնում էինք»:

Պետք էր սպասել, որ Մեհեմետ շահը պիտի դիմադրեր, պիտի թույլ չտար իր թիկունքն անցնել, բայց տեղից անգամ չըշարժվեց: Երևի Մեհեմետ շահը մտածեց՝ Թահմազ Ղուլիի զորքերը թող տեղավորվեն, հետո դրանց երկու կրակի մեջ առնելով, (միաժամանակ հարձակում իր դիրքերից և իր մայրաքաղաք Ճիհանապատից) կոչընչայնեմ: Այդպես էլ սկսեց, միայն թե Թահմազ Ղուլին այդ մասին էլ մտածել էր:

Թե՝ Ճիհանապատից հարձակվողներին մասամբ ոչնչացնում, մասամբ փախցնում էր և թե Մեհեմետ շահի հետ կռվում:

Անշուշտ հետաքրքիր է Թահմազ Ղուլիի բանակի քանակի մասին մի երկու խոսք ասելը: Այսպես, նրա ոռնիկ ստացող մասը՝ երեսունը հինգ հազար էր, իսկ ամբողջ բանակում՝ երեք հարյուր հազար մարդ կար: Բանակից դուրս գալ հնարավոր չէր, մինչև որ Թահմազ Ղուլիից համապատասխան թույլտվություն չլիներ: Իսկ փախչել, նորից հնարավոր չէր, անա թե ինչու, առաջուց գնում են շարքաշները, իսկ բանակի երկու, երեք կամ չորս ժամ ետևից



«քշողներ»-ն էին գալիս: Նույն բանն էր և աջ և ձախ կողմերում: Եթե այդ մարդկանց ձեռքն ընկար, անպայման պիտի բերեն Քահնազ Դուլի մօտ, իսկ նրա վճիռը իհարկե պարզ էր:

Մի հետաքրքիր երևույթ՝ ամբողջ բանակում հիսուն հազար կանայք կային. է՛, հիմա պիտի հարց տաք, թե բանակում ի՞նչ կարիք կա հիսուն հազար կնոջ, այսպես՝ որը պոռնիկ է սիրել իր երկրում և հետը բերել, մի ուրիշը իր կինը, երբորդը՝ որպես սպասուհի, վերջապես կային մարդիկ, որ երկու-երեք կին ունեին:

Քահնազ Դուլին երբ զինվորի կարիք ունենար, դիմում էր հետևյալ խորամանկութեան՝ այդ հիսուն հազար կանանց տրդամարդու հագուստ էր հագցնում, զինում և ձիերի վրա նստեցրած նոսր շարքերով իր բանակի հետևի մասում պահում, խաբելու թշնամուն թե՛ դեռևս ահագին զինվոր ունի պահեստում:

Արեւ մայր մտնելուն չորս ժամ էր մնում, երբ Մենեմեա շահի հետ պատերազմն ըսկըսեց: Մինչև իրիկվա մթնաշաղը տեղի ունեցած այս պատերազմը սոսկալի էր, այնքան որ Քահնազ Դուլի քիթն ու բերանը հողումված էին: Թշնամին տեղի չէր տալիս, լավ էր դիմադրում, մի քան, որին Քահնազ Դուլին չէր սպասում:

Մենեմեա շահի զինվորները պատերազմի փորձ չուներին. մինչդեռ Քահնազ Դուլին և իր զինվորները, պարզ է, այսքան ժամանակ Օսմանցիների, Ռուսների և այլ թշնամիների դեմ մղված կռիվներում կռիվել էին: Այո՝ քուրը նկատի առնելով, իսկապես զարմանալի և ահեղատալի էր Հընդկացիների այսպիսի ուժեղ դիմադրութունը: Ապրին (աֆերիմ) հնդկացիները:

Իրիկվա մութն իջել էր: Հնդկացիների գորահրամանատարին (որի անունը Սաաաթեթ խան էր) գերի էին բռնել: Երկու կողմերն էլ հաղթեցին: Սաաթեթ խանին բերին բանակատեղի:

Հետևյալ առավոտ արշալույսին Քահնազ Դուլին հրամայում է իր մօտ բերել Սաաթեթ խանին: Հարցնում է նրան հընդկացիների զինվորների, ռազմամթերքի և այլ բաների մասին: Սաաթեթ խանը պա-

տասխանում է. «զինվոր էլ շատ ունենք, ռազմամթերք էլ, պարեն էլ, ամեն բան էլ ունենք»:

Քահնազ Դուլին համոզվում է, որ եթե մի անգամ էլ սրանց հետ պատերազմի բռնվի, իր պարտութունը անխուսափելի է, որովհետև մտածում է. «քանի որ այս հնդկացիները դեռևս պատերազմի փորձ չունենալով, արշան հոտին վարժված չլինելով, նիհար ա կանացի բնավորութեան տեր՝ չորս ժամ որ սուսերամարտի դիմադրեցին, հաղա եթե մի քանի օր պատերազմել սովորեն իմ նմուշը չեն թողնի»:

Ու սկսում է խորամանկութուն մտածել:

Դիմելով Սաաթեթ խանին՝ Քահնազ Դուլին ասում է. «Մենեմեա շահը իմ եղբայրս է, ես եկել եմ նրա հետ տեսութեան, հյուր չի ընդունի»: Սաաթեթ խանը չի պատասխանում: Քահնազ Դուլին ավելացնում է. «Գրիք Մենեմեա շահ կըրորս, որ ես նրա հետ տեսութեան եմ եկել, բարեկամութեան եմ եկել և ոչ թե թշնամութեան, վերջապես ինչպես կուղես գրիր, միայն թե էլ կռիվ անել չտաս»:

Սաաթեթ խանն էլ իր շահին ինչ է գրում-չի գրում, նամակն ուղարկում է: Մենեմեա շահը այս նամակը ստանալով՝ կարդում և պատասխանում է. «Քահնազ Դուլին մտավորապես երկու հարյուր հազար մարդ ունի, աշխարհում մրանդ տեսնվել է այսպիսի հյուր»:

Քահնազ Դուլին նորից իր մօտ է կանչում Սաաթեթ խանին և ասում. «տե՛ս, խա՛ն, այս գործը դու հաջողացրիր, լավ, թե ոչ ինքզինքդ մեռած համարիր. ես այստեղ ես դառնալու չեմ եկել, մեռնելու եմ եկել (—ես կը մեռնեմ, բայց չեմ դառնա)»:

Սաաթեթ խանն ինչ անի, հոգին անուշ է, ինչ գրում է չի գրում իր շահին և ահա Մենեմեա շահից պատասխան է գալիս, թե՛ «վաղը գալու եմ»: Այսպիսի գրական պատասխանը բացատրվում է նրանով, որ Մենեմեա շահը շատ սիրելիս է լինում Սաաթեթ խանին, հավատացած է լինում, որ նա անընդունակ է ստելու, մանավանդ, որ Սաաթեթ խանը առձիկ և գործունյա, հնդկական ահագին նահանգներ նրան վրա-



տանված, հնդկացիների մեջ հաճախ պատահած կռիվներում ղեկավար, և ամեն մի գործ հաջողութեամբ լուծող (երեսը սպիտակ հանող)։ Ահա Սաաաթեթ խանին այսպիսի հովատ ընծայված լինելուն, վստահում և «վաղը գալու իմ» պատասխանը ուղարկում է։

Մեհեմետ շահի վեզիրը՝ (նախարարապետ) Քամերտի խան, կարգապահութեան պետը, ամբողջ նախարարները, մեծամեծները, գիտունները, մեծ ու փոքր բոլորը ասել են. «Տեր իմ, ի՞նչ բանի պակասութեան ունեք, որ վաղը գնալու մասին ձեր կամքն եք հայտնում։ Փառք աստուծո ամեն բան ունենք, թե ղինվոր, թե ազգամայիներ, թե պարեն, թե թնդանոթ, մեր գանձարանն էլ լիքն է։ Եթե զինվորի պակաս եք պզուտ, հրամայեցեք թող զինվոր հավաքվի։ Եթե ուրիշ թշնամիներ էլ ունեք, լուր ուղարկեցեք մեր հարևաններին բարեկամութեանը աշակիսի օրվա համար է։ Զե՛ որ մենք նրանց կողքին միշտ էլ կռվել ենք, թող հիմա էլ նրանք գան մեզ օգնեն։ Օտար երկրներից հայտնված այս թշնամուն դուրս մղենք, ազատենք մեր գավառները և նորից մեր բարեկամութեանը բարեկամութեան կլինի (կամրապնդվի)։ Ահա աշակիսի բովանդակութեամբ գրեցեք մեր բարեկամ հարևաններին։ Այսպիսի միջոցներով, առաջ աստված, այդ թահմաղ Դուլին կոչեցեալի բուրդը կը գզենք և դուրս կը վնասենք։

Այս խորհուրդների վրա Մեհեմետ շահը նորից նամակ է գրում թահմաղ Դուլին թե. «Ես քո ոտին չեմ գալու, պատերազմ ունեմ, պատրաստ եղիր [մահվան]»։

Թահմաղ Դուլին նորից է կանչում Սաաաթեթ խանին և ասում «վաղը, նախքան պատերազմ սկսելը քեզ կզխատեմ ու նոր միայն պատերազմ կգնամ» և խիստ նեղանալով, հանդիմանում ու դուրս է վըսլնում։

Սաաաթեթ խանը համոզվում է, որ պիտի սպանվի, ինչ անում է չի անում Մեհեմետ շահի սիրտը շահում ու բերել է ասպիս թահմաղ Դուլին մոտ։

## ԳԼՈՒԽ ԵՈՓԵՐՈՐԳ

Երբոր Մեհեմետ շահի գալուստի մասին թահմաղ Դուլին լուր է ստանում, կարգադրում է հատուկ բնակարան պատրաստել և ինքն էլ ծռնկը ծռնկի վրա, մեջքով կրթնած՝ նստում։

Մեհեմետ շահը գալիս է ասացին. մենք էլ ցանկացանք տեսնել, թե ինչով է դալու. ձիով, թե հեծիտան, բայց նա գալիս էր ոչ ձիով, ոչ հեծիտան, և ոչ էլ թահալը բեկանով<sup>1)</sup>։

Նստած գահը՝ ազնվականների կամ թե մեծամեծների (Պուտո) երկաթեղանի մակույկների նման մի բան էր։ Քամակի կողմում փղոսկրանման ճյուղեր քաշված, կամ փղոսկրե թևակալների (տրաբեղ) նման, շինված տախտակից և վերե նկարադրվածի պես շուրջը չորս մատ լայնքով նուրբ փղոսկրյա թևակալներով պատրաստված, ինքն էլ մեջք բաղմած, ծանր-ծանր, վեց մարդ<sup>2)</sup> կանից և վեց մարդ առաջից, սպիտակներ հաղած գալիս էին ուսերի վրա բարձրացրած. կարծես դադաղ տանելիս լինեին։ Ինքն էլ վրան նստած նարգիլե էր քաշում, որի սարքը ներքևում ընծած պահում էր մի հետևող։

Ահա այսպես մոտեցավ Մեհեմետ շահը։ Իջավ և հինգ-սասը քայլ քայլելուց հետո՝ «Եմ շահ» դռնից։

Թահմաղ Դուլին ցատկեց ելավ իր սենյակից մոտեցավ ու, փաթաթվեցին, համբուրվեցին և ձեռք-ձեռքի տված թահմաղ Դուլին առաջնորդեց իր սենյակը։

Սկսան գրույց։ Ծաշի ժամանակ եղավ՝ հաշիցին։ Լավ ժամանց ունեցան։ Հետո Մեհեմետ շահը թե՛

— Բանակատեղիս պետք է վերադառնամ։

— Հատուկ ձեզ համար սենյակ եմ պատրաստել տվել, — ասում է թահմաղ Դուլին։

— Չե, բանակատեղիս չգնամ, չի լինի, — ավելացնում է Մեհեմետ շահը։

Թահմաղ Դուլին թող տվեց։ Մեհեմետ շահը իր բանակատեղին գնաց և հետևյալ

<sup>1)</sup> Թահալը բեկանը՝ փղերի վրա նստրված գահ է։

<sup>2)</sup> Բնագրում գրված է՝ տաթըն առլա՝ արաբականորեն գրչի սխալ է. պետք է լինի՝ տաթըն ասում որ-տքնասան։ Մ. Խ.



օրը լուր է ուղարկում թե՛ «պատերազմ ունեմ»։ Ըստ երևույթին նրա վեղերն ու մեծամեծները չեն համաձայնվել։

Թահմազ Ղուլին նորից կանչել տալով Սաատեթ խանին՝ ասում է. «Երեկ շահը մեզ մոտ էր, եթե մեր սրտում կեղծիք կամ վրեժխնդրություն լիներ, մենք երեկ կը գործադրեինք։ Մենք նրան ասացինք, որ բարեկամության ենք եկել, էնպես էլի, տեսության ենք եկել, դրիք Մեհեմետ շահին—թող դա մի երկու խոսք էլ խոսեմ ու թողնեմ հեռանա՞մ»։

Սաատեթ խանն ինչ է գրում-չի գրում, նորից բերել է տալիս Մեհեմետ Շահին։

Այս անգամ, որ եկավ էլ չթողեց նրան թահմազ Ղուլին։

«Եղբայր,— ասում է թահմազ Ղուլին,— վեց-յոթն օր ինձ մոտ ժամանակ անցկացնեմք. բանակիդ հրաման տուր, որ ամեն մարդ թող իր տեղը գնա. մենք ձեզ հետ այստեղ մի քանի օր ուրախություն անենք, հետո ես իմ նահանգը (երկիրը) կը գնամ, դու էլ կվերադառնաս և բարեկամությունը կմնա բարեկամություն»։ այսպես համոզում ու հավատացնում է նրան։

Մեհեմետ շահը համոզվում և յուրայիններին նամակ է գրում՝ գովելով թահմազ Ղուլիին, հրամայում է իր բանակին, որ ցրվեն։ Այնպես ել անում են։ Ամեն մարդ իր տունն է գնում. ուղմամթերք և ամեն բան քաշում տանում են։ Այսպես ուրեմն, Մեհեմետ շահի բանակը ետ քաշվում, գնում է, իսկ ինքը մնում թահմազ Ղուլիի մոտ մի քանի հայրուր մարդով։

Վեց-եոթն օր հետո թահմազ Ղուլին ասում է Մեհեմետ շահին. «Եղբայր քանի, որ մինչև այստեղ եկել եմ, առանց ձիահաղաղ տեսնելու. վերադառնալը օազական է ...»։

Մեհեմետ շահն ինչ անի — ճարճա՞ն պատասխանում է. «հրամեցեք միասին գնանք, եղբայր»։

Թահմազ Ղուլին թե. «մի վախենա՞ք շահ, ես ամեն տեսակ մթերքից էլ առատությամբ ունեմ, այսպես որ քաղաքից ոչինչ չեմ ուզի»։

Վեց-եոթն օրից հետո ճանապարհ ընկան

դեպի Ճիհանապատ, ձիերը, պահելով կողք կողքի հավասար գծի վրա<sup>1)</sup>։

Երրորդ իշխանում թահմազ Ղուլին ասում է Մեհեմետ շահին. «Նամակ գրիք, որ մեզ համար տեղ պատրաստեն։ Մեհեմետ շահն էլ նամակ է գրում Ճիհանապատ, որ իր պալատի մի մասը հատկացնեն հյուրին՝ թահմազ Ղուլիին, որը մի քանի օր իրեն հյուր պիտի լինի և այլն։ Եւ ուրիշ ինչ է գրում-չի գրում յուրայինները հրամանը կատարում են, պալատում տեղ պատրաստում։

Զորքորդ օրը թահմազ Ղուլին ասում է. «այսպես... քաջահայտ քաղաք մտնել չի լինի, դու պատգարակիդ մեջ մտիք, չորս կողմը ծածկիր և այդպես գիշերով մտնենք Ճիհանապատ. որովհետեւ եթե այսպես մտնենք, ժողովուրդը երես կառնէ [կշփահա] և հետո քեզ այնքան ել չի հնազանդիր»։

Մեհեմետ շահն էլ միամիտ մարդ (և ոչ միայն Մեհեմետ շահն, այլ բոլոր Հնդկաստանցիք միամիտ են) թահմազ Ղուլիի ասածին հավատում և այդպես էլ անում է, գիշերով մտան Ճիհանապատ։ Մենք ել միասին էինք։

Թահմազ Ղուլին քաղաք մտնելուն պես Մեհեմետ շահին բանտարկեց և ամբողջ վաճառականների ապրանքը գրավեց։

Քիչ հետո Սաատեթ խանին կանչում է իր ներկայության և նեղանալով ասում.

«Ով ստորին, դավաճան պաշտոնյա, դու Մեհեմետ շահի հացը կերար, պատմուճանը հազար և նրա շնորհիվ այնքան փառքեր վայելեցիր։ Ով թագավորադավաճան, դու քո տիրոջ թշնամություն կատարեցիր. ինչ կը լինէր, որ դու ինձ չհնազանդեիր ու ես էլ քեզ սպանէի։ Տղամարդ մարդը իր տիրոջ համար պետք է մեռնի, որպեսզի տերն էլ նրան օրհնենքով հիշի։ Հիմա քեզ պիտի սպանեմ և ունեցած ամբողջ հարստությունդ ալ պիտի գրավեմ և երեք դավաճաներդ թշվառության մեջ պիտի մնան։ Կորիք աչքիցս ու էլ շուքդ էլ չտեսնեմ» — ասում է բարեկամությամբ թահմազ Ղուլին։

Այս խոսքերից Սաատեթ խանը խղճահարվում և անձնասպան է լինում։ Նրա

<sup>1)</sup> Հավասար աստիճանի նշան։



ունեցվածքը գրավում-բերում են: Սառսեթ խանը ապրելիս է հղել Տեքքյանում: Ասում են՝ ինքն էլ ընկել Իրանցի՝ Նիշապուրցի էր: Թե Տեքքյանում, թե Պենկելաում տուն-տեղ է ունեցել:

Մի քանի օրից հետո Մենեմեա շահի պալատի առջևի հրապարակի վրա Թահմազ Դուլի բանակի բազարը սարքված էր: Երկու շաբաթ վրաններ և նրանց միջի ուղիղ տարածությունը մի լայն ու կանոնավոր փողոցի տալավորություն էր թողնում: Հազար ձեղափրճի (250 գրամ = 90 տրամ) դնդակ նետող պատրուգով հրացան ունեցող) հատկացված էր այս բազարի պահպանության:

«Էճնաս» կոչված մի խումբ մարդիկ, որոնք բաղաքացի չեն, քաղաքում ոչ տուն ունեն, ոչ էլ ունեցվածք, այդ նահանգից էլ չեն. վերջուպես էճնաս ասինք յա, ինչ երկարացնեմ, չորս-հինգ հայրուք անվար-տիներ, խորհրդակցություն են արել թե՛ մեղանից շատերը հինգ տարի, շատերը տասը տարի այս քաղաքում քարշ ենք գալիս. հիմի որ Թահմազ Դուլին այս քաղաքը գրավեց, եկեք հարձակվենք բանակի բազարի վրա, Թահմազ Դուլին պիտի նեղանա և քաղաքը ջարդել տա և ահա մենք այս առիթից օգտվելով մի քիչ բան-ման կը թալանենք և մեր երկիրը կգնանք, եթե ոչ, այստեղ այսպես մնալով տարիներով պիտի փախնք-կորչենք. — կը լինի-չի լինի, այս էճնասները մտածում են [որոշում են]. մեկ էլ երեկոյան կգանի (արևը մայր մանելու ժամանակի աղոթք) ժամանակ մի հարձակում են գործում բանակի բազարի վրա: Թահմազ Դուլին անմիջապես խմանում և կարգադրում է, որ ևս հազար ձեղափրճի թող հսկեն և եթե մինչև առավոտ վաղ չանցան ևս գիտեմ իմ անելիքը: Մա էլ ասենք, որ Թահմազ Դուլին չէին հայտնել հարձակվողների էճնասներ լինելու մասին այլ իմացրել էին թե քաղաքացիք ուղում են բանակը ճնշել ու թալանել:

Հարձակվող էճնասները մինչև առավոտ չեն հեռանում:

Առավոտյան աղոթքի ժամին Թահմազ Դուլին դուրս եկավ Մենեմեա շահի պալատից, կանգ առավ բանակի բազարի մոտ և

ցատկոտ հայացքով դիտելով քաղաքը հրամայեց՝

— Կրակ տվեք քաղաքը և թալանեցեք:

Զինվորը տարածվեց քաղաքում. կրակ տվին-թալանեցին: Եւ կնիկ, երեխա աղջիկ-մաղջիկ, բոլորին գերի վերցրին:

Մի քանի օր անց քաղաքացիներից՝ խելքը գլխին, ընտանիքի տեր, բարեգործ վաճառականներ, մարդավարի մարդկանց զավակներ, մոտ հայրուք հողի հավաքվել են խորդակցելու, մեկն ասել է. «Այ մարդիկ, հիմա Թահմազ Դուլին կարծում է, թե այս գեղերը մենք՝ քաղաքացիներս ենք առաջ բերել», մի քանիսն էլ, թե. «Այ մարդ, եթե փորձենք նրա մոտ գնալ, բարկացկոտ մարդ է, մեզ բոլորիս կմորթէ», ուրիշներն էլ սրանց առարկել են, թե «մորթելու է թող մորթի, մեր նամուսը, մեր կին ու երեխաները, մեր ունեցած չունեցածը գնալուց հետո, ինչ կարելի է մեր ապրելուն»: Այսպես իրար համոզել, միաբանել և եկել են Թահմազ Դուլի մոտ:

Թահմազ Դուլին սրանց տեսնելով ասում է. «Այ հիմար գլուխներ, թե որ քաջ էիք, ինչո՞ւ ժամանակին քաղաքից դուրս չկովեցիք»:

Քաղաքացիները պատասխանում են՝ «Տեր իմ, նրանք [հարձակվողները] բոլորը էճնասներ են, լոթի մարդիկ, մենք ձեզ դեմ կովելու չենք ելել, և վերե բացատրվածին պես տեղակայնում են Թահմազ Դուլին»:

Թահմազ Դուլին մտածեց, որ խկապես բանակի բազարին հարձակվելը քաղաքացիների գործ չի կարող լինել, լաց կղավ և տապ՝

— Իսկապես այս խնդրում ևս թերի եմ մտածել և մոռնալիկ կանչել ավեց. «վաչ նրան, ով երեք օրվա ընթացքում իր վերցրած գերիները չվերադարձնի. երեք օրից հետո ում մոտ որ գերի գանեմ նրան կը գլխատեմ»:

Եւ Թահմազի կրտսեր (փոքր) Արուսթինս (այս պատմությունը գրողը), երեք օրից հետո բանակի բազարում ներկա եղաւ երեկոյան դեմ ուղեցի պալատի դռնից ներս մանել և հանդիպեցի կանանց, երեխանե-



րի, աղջիկների, որոնց վրա միայն մեկ-մեկ վարտիկ, դուրս էին դալիս լաց ու կոծով, դիմներին ծեծելով: Մոտավորապես հազար հոգի էլ լինեին: Ես այնտեղ, դռների արանքում սառած [ապշած] մնացի: Արարիչ աստուծո՛ւ այս դարձանքի բանն էլ այստեղ տեսա:

Այս բոլորից հետո, Քահմաղ Ղուլին Մենեմետ շահի հետ միասին այդ պարտի մի հրապարակում հանդես սարքեց. և որպեսզի բոլորը տեսնեն, դիտեն, փոխած գորգերի վրա նստած, ճաշեցին: Քահմաղ Ղուլին կանչել ավելի ինչքան երգիչներ, նվագողներ, ծաղրածուներ, կատակախոսներ, հաճոյախոսներ և զուռնաձիներ, թմբկահարներ կան, բոլորին, մի տեղ հավաքել ավելի և հրամայեց որ ամեն մեկը իր շնորհքը ցույց տա:

Այս հանդեսը որ ծեպ իւլ անքեք է կոչվում, պարսից շահերը կազմակերպելիս են եղել ընդհանրապես Պայրոմի տոներին և դարձնամուսին:

Այս «ծեպ իւլ անքեք» կոչվածը այնպիսի մի ուրախություն է, որ ոչ ոք իրար չի հասկանում, ոչ ոք իրար ձայն չի լսում, խառնափնդոր մի աղմուկ: Ահա այսպիսիսի մի խառնիխուռն բան է, ուր այդ գիշեր մենք էլ սող էինք նվազում: Հիմի դուք կասեք, թե՛ «Բա որ իրար չէիք հասկանում, ոնց էիք նվազում».— Այ մարդ դու էլ, այդ աղմուկի մեջ սող կարող ես նվազել: ավելին՝ մենք մեր երգած եղանակը չէինք հասկանում, ուր մնաց կողքի ընկերոջդ եղանակը հասկանաս: Այնքան որ մղրապը (գարկան) դարկում էինք, հա դարկում, իրրե թե բան էինք նվազում, դատարկ բան: Մինչդեռ անվերջ դիտում էինք Քահմաղ Ղուլի խնձույքը, տեսնում էինք նրանց (Մենեմետ շահի հետ) խոսակցությունը, բայց թե ինչ էին խոսում, ի հարկե չէինք լսում: Միայն թե մի պահ տեսանք, որ Քահմաղ Ղուլին Մենեմետ շահի գլխի ցցունքը առավ և իր կողքը՝ գետնի վրա դրավ: Մի որոշ ժամանակ անց՝ Քահմաղ Ղուլին գետնից վերցրեց Մենեմետ շահի ցցունքը և անցրեց նրա գլխին: Մենք սող նվազելիս այս բոլորը տեսանք, խփապես մեր աչքերից էլ արտասուքներ դուրս

եկան: Հետո նաև այն տեսանք, որ երկուսն էլ սաքի ելան, ձեռքերնին բարձրացրին, աղոթեցին ու համբուրվեցին:

Հետևյալ օրը, այնքան միայն լսեցինք, որ Քահմաղ Ղուլին Մենեմետ շահի աղջիկը իրա տղին է առել: Ես չեմ տեսել, լսողաց եմ, ինչու որ հարսանիք բան չեղավ, որ մենք էլ իմանայինք: Ոմանք ասում էին Մենեմետ շահի աղջիկն է, ոմանք թէ՛, ուրիշի աղջիկն է: Էն այդ էլ պակաս մնա, թող չիմանանք:

Այս հանդեսից հետո, երեք-չորս օր էլ մնացինք Ճինանադատում, հետո դուրս եկանք: Ճինանադատում և շրջակայքում ընդամենը մնացինք իննսուն օր:

Երբ հանապարհ ընկանք, Մենեմետ շահը Քահմաղ Ղուլին ողջերթի եկավ երկու-երեք հանգրվան և այնտեղ իրար մալթանքներ հայտնելով, մենք՝ այս կողմ, Մենեմետ շահն էլ ևս դարձավ դեպի Ճինանադատ:

#### ԴԼՈՒՆՈ ՌԻԹԵՐՈՐԳ

Մենեմետ շահից բաժանվելուց հետո Քահմաղ Ղուլին ուղղություն բռնեց դեպի Սինդ: Սինդը մեր թեքված տեղից այնքան հեռու է, որքան երգրումը Սաադուլից: Թե որտեղից թեքվեցինք դեպի Սինդ, դժվարանում եմ ճիշտ ասել, որովհետև անունները խրթին էին և մտքումս չեն մնացել: Այնքանը միայն գիտեմ, որ Լահորն անցել էինք, ժանապանդ որ Լահորի [Բահ] ասր խանը Քահմաղ Ղուլին նվերներ մատուցեց:

Քահմաղ Ղուլին մի քանի օր Լահորում մնաց. Բահատուր խանին ինչ որ պատվերներ տալուց հետո նոր միայն հանապարհ ընկավ: Այս մեջբերումն արի նրա համար, որ դեպի Սինդ մեր թեքված տեղի՝ Լահորից այս կողմ լինելը հաստատեմ:

Քահմաղ Ղուլին նախքան Ճինանադատ գնալը՝ պատվիրակ էր ուղարկել Սինդի խանին, որ անպայման իր ժող դառ իսկ Սինդի խանը պատասխանել էր. «Բա Քահմաղ Ղուլին ինչացու է, որ ես նրա սաքը պիտի գամ եղբ, աչ քեզ բան, դու էլ քո տերն էլ գալաթ եք արել (խալթ եք կերել՝ հանցավոր սխալություն): Այսպես հանդիմանել ու համբու էր դրել Քահմաղ Ղուլի



պատգամավորին: Պատգամավորն էլ ինչ որ լսել էր Սինդի խանից, եկել նույնությամբ հաղորդել էր Քանձաղ Դուլին, ինչպես նաև խանի հետևյալ խոսքերը.—

«Թող մի անգամ Հինգը նվաճի, նոր ինձ հրամայի»:

Քանձաղ Դուլին նեղացել էր:

Եվ ահա Քանձաղ Դուլին Հինգը նվաճելուց վերադարձին՝ նորից լուր ուղարկեց: Սինդու խանը նորից չեկավ և Քանձաղ Դուլին քաշեց քանակը Սինդու վրա:

Ինչպես վերև ասացինք հեռավորությունը Սաամրուլից մինչև Էրզրում էր, բայց ճանապարհը շատ վատ, դժվարանցանելի անտառապատ և տեղ-տեղ շատ շոգ:

Քանձաղ Դուլին գետ Սինդ չհասած, Սինդի խանը համոզվում է, որ Քանձաղ Դուլին պիտի գա համնի, որովհետև տեսնում է, որ Քանձաղ Դուլին այս ճանապարհին լավ տեղյակի պես, առանց վարանելու, բայց և դանդաղ առաջանում է:

Որ դրանում համոզվում է Սինդի խանը, իր քաղաքացիներին կանչում և ասում է. «Դուք ասում էիք և մենք բոլորս էլ կարծում էինք, որ Քանձաղ Դուլին մեր ճանապարհներում պիտի մոլորվի ու ինքն էլ իր բանակն էլ պիտի կործանվեն և նրա ամբողջ ունեցվածքը մեկ պիտի մնա. բայց իրողությունը մեր կարծածին ճիշտ հակառակը դուրս եկավ: Հիմա պետք է շտապ գործի ձեռնարկենք»:

Իսկապես, որ այս Սինդի ճանապարհները այնպիսի դժվարանցանելի և դժնավիժ տեղեր են, որ այժմ ուրեք հազիվ կարող են անցնել: Ել թող անտառի միջով անցնող ճանապարհների մասին խոսելը: Ծիշտն ասած ես շատ էի հու ընկնում և տառաժ թող սպանեն, միայն թե այս ճանապարհներից ազատվեմ: Բայց ժամանակն այնպես էր, որ դաշն ու գառը միասին էին ման գալիս: Ժվ եր ամաչում մարդ սպանելուց:

Հիմա գանք մեր բուն պատմությանը:

Սինդի քաղաքացիները պատասխանում են խանին, թե չեն անենք տեղ իմ, էլի հրամանը ձերն է. դուք կարող եք մի ճար անել: Թանը պատասխանում է՝ ձեր տները կը վառեք, ինչքան ապրանք որ ձեզ հետ կարող եք տանել կը տանեք, մնացածը կը թաղեք:

Բուրն էլ նրա խորհուրդին հետևում են մանավանդ, որ խանը խոստանում է Քանձաղ Դուլի գնալուց հետո իր ծախսով շինել տալ և փաստները հատուցել: Քաղաքը վառում են ու փախչում. սև փախչում. վառված քաղաքից վեց-եթե հանգրվան հեռու՝ իրենց ամառվա քաղաքը, որտեղ ամեն մեկը իր ամառանոցը կամ տունն ունի:

Սինդ քաղաքը շատ շոգ է լինում, այնպես որ հուլիս ամսում եթե խմոր չաղվես ու լավաշի պես բանալով արևին դնես, քիչ կը մնա որ եփի: Սինդցիները, որ շոգին վարժ են, իրանք անգամ չեն կարողանում գլխանալ և տարվա չորս եղանակներից մեկն այդ ամառանոցում են անցկացնում:

Սինդ քաղաքում հորեր փորեցինք: Սառը կենսատու ջուր դուրս եկավ, բայց պետք է հորի գլուխը կենալ և խմել: Իսկ եթե հինգ բոպե անցավ, այնպես տաքանում է որ: Ես մի սավան ունեի. մերկանում, այդ սավանը ջրում թրջում, առանց քամելու փաթաթում դլխա. մինչև նարկիլիս կրակը վառել, սավանը չոփ-չոր, հաբեթի նման էր լինում: Նորից էի ջրի մեջ թաթախում սավանս և վրաս տոնում, նարկիլիս կրակը մարած էր լինում: մինչև վառելի, սավանս նորից չորանում էր: Այսպես էր բոլորիս կյանքը: Ինչ երկարացնեմ, երկու քեֆը մի անգամից չէի կարողանում վայելել՝ մինչև նարկիլիս էի վառում, սավանս էր չորանում, մինչև սավանս էի թրջում, նարկիլիս էր մարում: Վերջապես ճիշտ որ երկու քեֆը միատեղ չկարողացա վայելել: Հիմի դու պատկերացուր, թե ինչպիսի երկիր է եղել այս տեղը:

Երբ Քանձաղ Դուլին տեսավ, որ տեղացիները վառել ու փախել են, մի մարդ գլուխով և հարցրեց նրանից, թե քանի օր է փախել են, նա էլ պատասխանեց, թե վեց օր է: Այս լսելուն պես, վստահ իր քաղմաթիվ ձիերին, մի բոպե էլ կանգ չառավ գլխավոր վերցրեց և շտապ առաջ խաղաց հետապնդելու: Փախչողները տառապանքով հասնում են, Քանձաղ Դուլին երեկոյան արդեն նրանց պաշարում է: Այնտեղ, ծովեզերքում մեծ բերդ է եղել:

Մենք բանակի հետ էինք մնացել: Ծառ չերկարացնենք, դրավեց, խանին իր դա-



վակներով բերեց. մենք խանին տեսանք, բայց անունը չեմ հիշում: Շրթներում օղեր, ձեռքներին թեվերից վեր ապարանջան էին: Ինքն էլ բնիկ աղվան է եղել: Թեև Հնդկահան թագավորի երկիրն է եղել Սինդը, բայց այս խանը նրան ննջարկվելիս չի եղել:

Թահմազ Ղուլին ստիպեց Սինդը խանին որպեսզի վերջինս խոստովանի, թե իր ունեցվածքը, կարողությունը ուր է թաղցրել: Սինդի խանը խոստովանեց, որ հողի տակ է թաղել: Մարգիկ հատկացվեցին, հողի տակից հանեցին և արծաթեղենը և ոսկեղենը, որոնք քաղաքի հրդեհի ազդեցությամբ տակ սևացել էին: Թահմազ Ղուլին ավելի իր ոսկերչատեսիլն որ սպիտակացնի (փայլեցնի): Հետո խանի երեք որդիներին պատանդ վերցնելով, նորից Սինդի վրա խան կարգեց: Սինդ քաղաքի կարգ ու կանոնի մասին կարգադրություններ անելով, գնալի Իրան վերադարձի ճամբան բռնեց այն ճանապարհով, որով գնացել էինք. այսինքն Լահորից մի քանի հանգրվան դեմը, մեր թեքված կետով:

Թահմազ Ղուլին իր մուրազին Իրան էր վերադառնում:

### ԴԼՈՒՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Այստեղ ես ուզում եմ պատմել Թահմազ Ղուլիի վերաբերմունքից մի դեպք, որ մոռացել էի:

Դեռ Սինդ չգնացած, Ճիհանապատից դուրս գալուց ամիջապես հետո՞՞ — 6 օր մունե տիկ կանչել ավելի, որ «ովքեր Ճիհանապատի դեպքերից հետո քովերնին բան-ման (թալանած) ունեն թող քերեն իրեն տան...»: Ասածու անունով հավատացնում եմ ձեզ, որ ոչ ոքի վեճը չեղավ: Թահմազ Ղուլին էլ ձայն-ձուռն չհանեց: Դու մի ասի, մարդը (Թահմազ Ղուլին) իր գործն իմանում է: Երբ որ Ճեյհուն գետին հասանք, շուրջկալ կաղժեց և նույնիսկ կանանց շրջազգեստների տակերը կին խուզարկուհների միջոցով խուզարկել ավելի և ուժ մատ, որ բան գտավ, սպանել ավելի:

Ձինվորներից շատերն իրենց ունեցածը գետն էին գցում: Այս մասին հայտնում են Թահմազ Ղուլին թե՛ զինվորները Ճիհանապատում թալանած իրերը գետն են գցում:

Թահմազ Ղուլին պատասխանում է... «Թող գցեն, միայն թե իրենց մոտ չլինի. զինվորը հարուստ չը պիտի լինի»: Այսպիսով շատ ապրանք թափեցին Ճեյհուն գետը:

Մեկի ձեռքում կար մի վնասվելյալ տուփ՝ լիքը մարգարիտներով, որի ամեն մի հատիկը սիսեռից մեծ էր: Տուփը բաց արեց և այնպես ցրվելով նետեց գետը. ինչու որ Թահմազ Ղուլին շատ նախանձ էր. այնքան նախանձ, որ ոչ ոքի հարստանալը չէր ցանկանում: Ինչքան նվագածուհի կայինք ոչ մեկերնիս թույլ չէր տալիս, որ մեկի վրանում սաղ նվագեինք:

Հնդկաստանից վերադառնալիս լսել էինք, որ Ճիհանապատի գանձարանից երեք գահ է վերցրել. մեկը փերուզեից (երկնագույն գոհար), երկրորդը եշիմ-ից (օձակուճ — տեսակ մը մարմար), իսկ երրորդը գոհարազարդ, որը կոչվում էր Թավուզի թախտ (սիրածարդի գահ): Այսպես լսել էինք, բայց մենք չէինք տեսել:

Ճանապարհին այն էինք տեսնում, որ Ճիհանապատից վերցրած բազմաթիվ վարպետները, ուր որ մի քանի օրով կանգ էինք առնում այդ Ճիհանապատցի վարպետները, կնիկ մարդկանց նման կերկեֆ<sup>1)</sup> էին սարքում ու աշխատում: Ինչ էին գործում: Թահմազ Ղուլին մարգարտազարդ մի վրան էր դործել տալիս, որի մարգարտի ամենափոքր հատիկը Եալվայի սիսեռի հատիկի չափ էր:

Ուր որ կանգ էինք առնում, այս վրանը դործվում էր:

Թահմազ Ղուլին արշավանքի գնալիս որոշ անգերում, ազգամականորեն կարևոր կետերում պահակներ էր թողնում, որ չլինի իրա թիկունքից ճանապարհը կտրեն: Նույնիսկ Լահորի Բահատուր խանի սահմաններում պահակներ դրավ. թեև Բահատուր խանը իր ուրիշ եկել էր Թահմազ Ղուլին հղատակությամբ հայտնելու, բայց չէր զինաթափվել:

Պատքս, ուրեմն, այն մասին է, թե Թահմազ Ղուլին թիկունքում թողած իր բոլոր մարտիկներին հավաքելով՝ գալիս էր:

<sup>1)</sup> Վրան բաց անողների նման գործիք, որի վրա ամրացնում են բանվելիք կտորը:



եկանք—հասանք մինչև Ղանառհար:

Այստեղ լուր տարածվեց որ Թահմադ Ղուլին Թափուզի թախտը Ղանառհարում պիտի սարքավորէ, բայց չարեց: Ասին Ֆերահում պիտի սարքավորէ, այնտեղ էլ չարեց. հասանք Հերաթ. այստեղ բերդից դուրս սարքավորեց և բանակում գտնվող բոլոր ժողովիկ գնացին դիտելու: Մենք էլ գնացինք: Տեսանք Թափուզի թախտը սարքվել են, նրա կողքն էլ ժողդարտաշար վերանը:

Թափուզի թախտը միակտոր գոհարներից, թանկագին քարերով զարդարված հինգ հոգի նստելու տեղ ունեցող գահ էր: Գահի վերքը լուսնաձև, նման էր կախովի խաղողի որթատունկի:

Ամբողջ գահի մեջն ու դուրսը շինված էր միակտոր գոհարներից: Վերքի լուսնաձևով վրան գոհարներից մի սիրամարդ էր շինվել և սիրամարդի փետուրների վրա ինչքան որ գույներ կան, բոլոր գույներն էլ գտել ու համապատասխան ձևով դասավորել էին:

Եվ որովհետև գահի վերքի լուսնի վրա սիրամարդ էին տեղավորել, այդ իսկ պատճառով այդ գահը կոչվում է Թափուզի (սիրամարդի) թախտ:

Այս գահի բոլոր ձողերն ու մասերը մասնատվում և պետք եղած ժամանակ միացնելով, հատուկ կառուցվածքով պնդացվում են: Այնպես որ ցանկացած բռնակին կարելի է մասնատել և սնդուկների մեջ տեղավորել: Ահա այսպիսի հմտությամբ շինված էր:

Իսկ կողքի ժողդարտաշար վրանի վրա ժողդարիտներով առկֆեր ( . . . . ) և ֆենկըյարիներ ( . . . . ) են բանել: Վրանը երկու սյունանի էր և այդ սյուները գոհարներով զարդարված էին. մեկը սպիտակ մյուսը դեղին արծաթաթիկերով: Վրանի մի ցիցը ոսկի, մյուսը արծաթ: Ահա այսպիսի վրան էր շինել ավել Թահմադ Ղուլին:

Թահմադ Ղուլին յոթանասուն հազար կով, եղ, գոմեշ քչեց Հնդկաստանից դեպի Պարսկաստան: Ճանապարհին թեև երեսուն հազարը փչացավ, բայց քառասուն հազարը Իրան հասավ: Այսպես համաշափ, դեղեցիկ, պոյով ու վիքը, աչքերը ծարիր քաշած,

կնճիթները<sup>1)</sup> միշև գետին: Հնդկաստանում այնքան շատ և այնքան տառա են, որ Թահմադ Ղուլին յոթանասուն հազարը թեև քչեց բերեց, բայց էլի կեսից ավելին այնտեղ մնաց:

Այս Հերաթ քաղաքում էլ մեկ ծառայությունից ազատեց: Մեկ համար գրություն ավեց և մենք ճանապարհ ընկանք դեպի Պոլիս:

Հերաթից Սորասան եկանք և այստեղ տանը երեք օր կանգ առանք: Սորասանը մի մզկիթ (Իսլամների աղոթատեղի) ունի, որ կոչվում է Իմամ Բիգա: Այս մզկիթի կտուրը կապարի փոխարեն ոսկով է ծածկված: Իսկ ներսի առաստաղը՝ դեղին կրակարանի<sup>2)</sup> թիթեղի նման ոսկով պատած: Քառակուսի քարերով շինված գույնզգույն մինարեթի գաղաթի նշանը (ալիմ) ոսկուց է:

Այնպես պատմեցին թե՛ երբ Թահմադ Ղուլին շահ է դառնում, այդ մզկիթի ոսկե ծածկը հանել է տալիս և փող կարում ասելով. «Եթե ոտքս տյուզ կոխեց (եթե շահ դառնալս հաջողվեց), ոչ միայն ոսկյա թիթեղով կը ծածկեմ, այլ և դեմն ու դեմք մի հատ էլ զեպիլ (մատուց?) կը կառուցեմ»:

Նպատակին հասել և կառուցել է:

Ես Սորասանում այդ դեպիլն էլ տեսա, սրա ծածկն էլ ոսկի էր: Այդպես ասին, մենք էլ հավատացինք. խո փորձաքարին<sup>3)</sup> ենթարկելու հնարավորություն չունեինք:

Սորասանի մազկիթը<sup>4)</sup> ընավորությամբ մոլեռանդ են: Վերջապես ամեն բան ընդգիծությամբ լայնանում է տեղ են (հալածումը տարածում է):

Քանի որ խորասանյիների մասին մոլեռանդ են տաղլենք, նրանցից մի բան պատմեմ ձեզ:

Սորասանում, հնուց ընտանիքավոր հայեր չեն եղել: Թահմադ Ղուլին շահ դառնալու ժամանակ նպատակ է դրել Սորասանում մի հայու թաղ հիմնել Սպահանի մոտի Ջուղայի նման: Ամեն գյուղից և քաղա-

<sup>1)</sup> Ըստ երևույթին խոսքը՝ բիզանների մասին է:

<sup>2)</sup> Արևելքի հյուսիսային սահմանում 80 սանավաճ բարձրությամբ դեղին փայլուն կրակարաններ զօրծ էին անում:

<sup>3)</sup> Ոսկու որակը որսող քար:

<sup>4)</sup> Ըստ երևույթին խոսքը միայն հայերի մասին է:



քից ընտանիքավոր հայեր է պահանջել, որպէսզի նրանց տեղափոխի Սորասան:

Թե՛ քաղաքացիներ, թե՛ գյուղացիներ միարանելով, իրենց շրջակայքում ինչքան հովարտա (լոթի) հարքեցող, ծուլ, ծուռ, աւերք-հառած չափող, մեծի-պղտիկի հարգը չիմացող և այլ այս տեսակ մարդկանց ցուցակը կազմում ու Թահմազ Ղուլիին ներկայացնում են: Թահմազ Ղուլին էլ սրանց բոլորին տանում է Սորասան:

Թահմազ Ղուլին Սորասան քերած այս հայերին տալիս է անասնոց, ցանքսի տեղ, այգու տեղ, լծասարք, սերմացու, եկեղեցու տեղ և հազար թուժան էլ փող՝ եկեղեցին շինել տալու: Իսկ այս հայերը ամբողջ օրով հարբած ման գալով, մի քահնի տարում ուտում վերջացնում են այդ հազար թուժանը:

Այն Սորասանցին (պարսիկը), որ մի ժամանակ քրիստոնյայի (— քաֆուր) փեշը եթե իր փեշին դաշեր, իր փեշը կը կտրէր այդ նույն Սորասանցիներին հիմի այս հայերը բռնում ծեծում, հայհոյում են նրանց ու նրանց կրտսերն: Մի ժամանակ Իմամ Տիգա միգլիթի դռնից անցնող հային մեղմունքիս են եղել: Հիմա հայերը հարբած քշում-մըտնում են միգլիթի մեջ, հրում, հրճատում դուրս են վանդում (պարսիկներին) և Թահմազ Ղուլիի սարսափից ոչ մի Սորասանցի ոչ մի ձայն չի հանում, մի ճկույթով էլ չեն դարկում: Ահա վառիկ մեր ազգի մեջ ինչ տեսակ «չեղեղներ» ունենք, բայց և այնպէս մաղթենք, որ մեր ազգից նման քարեպոս, «իմաստուն» մարդիկ անպակաս լինեն: Ինչու որ՝ խոսք կա, թե՛ կրթութիւնը ուժից սովորեցիր:

— Անկիրթից, — պատասխանում են:

Եկեղեցի շինելու համար Թահմազ Ղուլիի նվիրած հազար թուժանը մսխող այս «չեղեղներին» էլ տեսանք Սորասանում: Իմ տեսածս (եկեղեցին) չորս պատ էր, վրան բաց:

#### ՂԱՌԻՆ ՏԱՍԵՐՈՐԴ

Հիմի ես ձեզ պիտի պատմեմ թե Թահմազ Ղուլին ոնց է շահ գտնում:

Նվազածունների վրանը բանակատեղից

Սկսւածարի և Պեշիկթաշի հետախորութեան չափ (մոտ 2 կիլոմետր) հեռու էր: Բանակատեղիի կենտրոնում Շահի վրանն էր, որի երեք կողմում իրեն մերձավորների վրաններն էին, իսկ առաջը՝ ընդարձակ հրապարակ ձիարշավի դաշտի նման:

Շահի վրանը կենտրոնում իր բարձրութեամբ նմանվում էր «տիքիլի թաշ»-ին:<sup>1)</sup> Միշտ այսպէս էր: — Իրանից մինչև Սալթիկի կիրճը այսպէս էր, իսկ Սալթիկից դեմը բոլորս միատեղ էինք:

Մեր՝ նվազածունների վրանը շահի և իր ավազանու վրանների մոտն էր գրվում: Իրա համար էլ ինչ անցնում-դառնում էր շահի մոտ, բոլորը տեսնում, դիտում էինք. ինչպէս տեսել էինք Մեհմեմա շահի գալն ու գնալը:

Սոսքս այն մասին է, թե նախքան Սալթիկը հասնելը մեր՝ նվազածունների վրանը բանակատեղից հեռու էր: Վտանգավոր կանգառներում Թահմազ Ղուլիի հորեղբոր տղան, որ խան էր և ուներ հազար մարդ, իր այդ հազար հոգով, Թահմազ Ղուլիի կարգադրութեամբ շրջանակաձև պահակութիւն էր կազմակերպում: Հորեղբոր տղան ասում էր «ես օսմանցիներին շատ եմ սիրում» — և իր ժամանակը դրեթե մեր վրանում էր անցկացնում: Նվազախմբի պեսի մոտ չէր գընում, այլ միշտ մեղ մոտ էր. տարիքով էլ Թահմազ Ղուլիից կամ մի տարով մեծ կամ մի տարով փոքր կլինէր:

Մենք պատմել տվինք Թահմազ Ղուլիի հորեղբոր տղին, թե ինչպէս Թահմազ Ղուլին շահ դարձավ: Եւ ահա նրանից ինչպէս լըսել ենք, այնպէս էլ պատմում ենք:

Թահմազ Ղուլին ընկի Քելաթցի էր, ինքն էլ քուրդ: Եթե ուզում ես իմանալ, թե որտեղի քուրդ է, — Տիարբեքլիի: Հիմի պիտի ասես, թե ինչ տանջութիւն Տիարբեքլիի քուրդը իրանցի լինի ու Քելաթցի, Քելաթ որ Սորասանից հինգ հանգրվանով ճանապարհ էլ դեպի խորն է: Ասեմ. — Շահ Աբրահա Քաղաատից հարձակվում է [օսմանցիների վրա] և մինչև Պոլսից նորին մեծութիւն Սուլթան Մուրադը պատրաստվում է, առդին շահ Աբրահա Տիարբեքլիի շրջա-

<sup>1)</sup> Պոլսում հին հաշարձաններից՝ կոթող:



կա գյուղերը զարկում—քշում է դեպի Քելաթ։

Ահա այս Քելաթ քշված քրդերի սերնդից է Քահմազ Ղուլին։

Սկզբում երկրագործ է եղել, մի խնդրադիր տալու գործ է պատահում և նա Քելաթից երկու տարով հեռանում, լինում է Սպահանում։

Սպահանում խնդրագիրը ձեռիցը առնում են, տարած նվերներն էլ առնում, պատվում ու շոտեն, սոսուն՝ ասելով դատարկ խոստումներով քնեցնում, ճամբում են։ Խընդրագրին պատասխան չեն տալիս։ Խնդիրքը հետապնդելիս, մի օր առանց նվերի է գնում, ծեծում վանդում են։ Այսպես երկու տարի իր խնդրագրի համար գնում-գալիս է ու արդյունքի չի հասնում։

Շահ պառնալուսի հետո այս խնդրագրի պատմությունը պատմում է իր զինակիցներին ու ծաղրածուներին. նրանք էլ ամիսը մի քանի անգամ իր ներկայությամբ այս «խնդրագրի» դեպքը կրկնում են [որպես ներկայացում]։

Ինքը Քահմազ Ղուլին ասում էր. «Ահա վափկ նրանց, այդ հիմարների [նախորդ շահերի] օրով, նրանց քանն ու գործը այսպես էր»։

Երկու տարի խնդրագրի համար ապարդյուն գնալ-գալուց հետո Քահմազ Ղուլին դառնում է սրտնեղ և այդ ժամանակ նա սկսում է Թորասանի շրջակայքում գողություն անել, ճանապարհ կտրել, մարդկանց կողոպտել, մեծակ անցքեր [կրճեր] փակել և հաժախ չի տալիս մարդկանց։

Լուրը հասնում է Թորասանի խանին թե քո սահմաններում այսպիսի մի ճանապարհ կտրող, մարդ սպանող, թալանող է երևան եկել։ Թորասանի խանն էլ մի տառնապետ է ուղարկում, որը մի կերպ սրան բռնում բերում է խանի մոտ։ Թանը սրան հարց է տալիս.

Ինչ ես ճանապարհներում մարդ սպանող, թալանող։

Քահմազ Ղուլին չի ժխտում, չի ուրախում՝

— Այո խանս, ճիշտ է, ես եմ, — ասում է։  
Թանը թե. — Բա հիմար գլուխ, դու չես իմանում, որ այստեղ խան կա. դու ճվ ես որ հանդգնում ես այսպիսի բաների։

Քահմազ Ղուլին պապանձվում է։ Թանը հրամայում է տանել և գլխատել։

Քահմազ Ղուլին աղաչում է. «աման խանրս, ինձ գլխատել մի տուր, իմ պիղծ արյունս թափել տալու պատճառ մի լինի, ես մինչև անխարհի վերջը քեզ ծառա, քեզ զինվոր կը լինեմ»։

Այսպես աղաչում-պաղատում է։

Թանի մոտ նստած քեզերն էլ միջամտում, խնդրում և ասում են. «Այսպիսի մարդու արյունը թափել մի տուր. մի կռիվ լինելիս առաջ քշիւ, թող դնա մեռնի. աւրանքում դու կաղաւթես արյան պարաքից»։

Այս միջամտությունների վրա՝ ի պատիվ հյուրերի՝ խանն էլ բաշխում է նրա կյանքը և մի տասնապետ կանչելով՝ նրան հանձնում—որպես զինվոր։

Թորասանի շրջակա գյուղերի և հարևան Ուզբեկական գյուղերի միջև սովորություն է եղել—իրար վրա հարձակվել, զարնել ու թալանել։ Ուզբեկները նորից են հարձակվում։ Այս մասին լուր է գալիս խանին, խանն էլ կարգադրում է այն տասնապետին, որի տասնյակի մեջ է լինում Քահմազ Ղուլին։ Գնում են կռվում և այդ կռվում Քահմազ Ղուլին քաջություն է ցույց տալիս։

Ուզբեկները լինում են չորս-հինգ հոգի. իսկ սրանք տասը հոգով հուպ են տալիս ու ուզբեկներին ցրում։

Թորասան վերադարձին, տասնապետը զեկուցում է խանին—«Տէր իմ, — ասում է նա, — էն գողը չկա, որի կյանքը բաշխեցիք, կռվում բավական քաջութուն ցույց տվեց։ Թանն էլ զոհ արամադրությամբ Քահմազ Ղուլին տասնապետի աստիճանին է բարձրացնում։

Մերթ ընդ մերթ գյուղերի վրա կատարվող ուզբեկական հարձակումների դեմ Թորասանի խանը Քահմազ Ղուլի—տասնապետին է ուղարկում։ Մա էլ գնում ու հաջողությամբ է դառնում։

Թորասանի խանը Քահմազ Ղուլին տասնապետությունից բարձրացնում է հիմնապետի աստիճանին և ուր և ինչ գործի որ ուղարկում է՝ Քահմազ Ղուլին հաջողությամբ է վերադառնում։

Թանը նրան բարձրացնում է հարյուրապետի աստիճանին։ Հարյուրապետությունից



հաղարարութեան և որովհետեւ հափաղանց գործունայ և լինում, մի օր էլ նրան բարձրացնում է սենեկապետութեան (խանի պալատի պարեա)։

Մի օր խանը իր առանձնատենչակում դիրք կարգալիս, երբ դրսից էլ ոչ մի մարդ չի լինում, թանձաղ Ղուլին ուսումնասնեք հանում մտնում խանի մոտ ու փաթաթվում է խանի ոտներին։ Խանը դարմացած հարց է տալիս, թե բանն ինչու՞ն է։ Թանձաղ Ղուլին պատասխանում է. «Աստուծո հրամանով քո տղջիկն և՛ ուզում»։ Խանը էլ չի մերժում ու ասում է տվի։

Թանձաղ Ղուլին դառնում է խանի փեսա։

Որոշ ժամանակ անցնելուց հետո Մյուրփեյիզը Ղանտահարից հարձակվում ու ֆերահը գրավում է։ Ավելի առաջանալով գրավում է Հերաթը։ Հերաթից էլ առաջանալով դալիս է Խորասանի վրա։ Բայց Խորասանում նրանք ոչինչ անել չեն կարողանում, որովհետեւ աներ ու փեսա Խորասանի դորքի գլուխն անցած փախցնում են Մյուրփեյիզին։

Մյուրփեյիզը լուր է ուղարկում Խորասանի խանին և ասում. «Այժմ ես գնում, և՛ Սպահանի վրա, գնամ գրավեմ և դուք այդ ժամանակ ինքներդ ինձ կը խնդրեք, կը հանձնվեք»։

Խորասանի խանը իր փեսա թանձաղ Ղուլիի հետ միասին հուպ են տալիս Մյուրփեյիզին ու պատասխանում են. «Ինչ որ ձեռքիցդ կգա, ես չթողնեմ»։ Եվ Մյուրփեյիզը քաշում-գնում է իր զորքը դեպի Սպահան։

Հասնում և գրավում է Սպահանը։ Բըռնում է շահ Հյուսեյնին, որի երեսուն չորս տղաներից քսանյոթին սրի է քաշում իրենց հոր՝ շահ Հյուսեյնի աչքի առաջ, հետո շահ Հուսեյնին էլ է սպանում։

Բայց այս բոլորը ոչ թե Մյուրփեյիզը, այլ նրա վեզիր՝ Միր Մահմուտն է անում, քանի որ Մյուրփեյիզը Սպահան մտնելուց անմիջապես հետո մեռնում է, և Միր Մահմուտը՝ ինքնիրեն շահ հայտարարելով՝ բըռնում է շահ Հուսեյնին և այդ սպանութիւնները կատարում։

Հետո Միր Մահմուտը ուսերից մինչև դաստակները (կաթված?) է ստանում։

Միր Մահմուտի վեզիր էջրեֆը, տեսնելով,

որ Միր Մահմուտը արդեն անհույս է, զբլուխը կտրել է տալիս և ինքն իրեն հայտարարում է շահ էջրեֆ։

Այդ սպանութեան միջոցին, շահ Հուսեյնի հավատարիմ լալաները, նրա մնացած եղբւր հրեխաներին մի հնարքով փախցնում են։ Ոմանց տանում այլ երկրներ, ոմանց պահում շրջաններում [Սպահան]։

Հետագայում Ազվանը [շահ էջրեֆը] օսմանցու հետ կռիվ է տնում, ջարդում, ջարդվում։ Ինչ կրկարացնեմ, այս դեպքերը մեզ հարկավոր չեն, մեզ հարկավորը թանձաղ Ղուլիի շահ դառնալու պատմութիւնն է. ուրեմն անցնենք մեր պատմութեան։

Երբ Սպահանում ազվաններն էին, Խորասանի խանը իր փեսա թանձաղ Ղուլիի հետ Խորասանի դորքի գլուխն անցած, քաղաք առ քաղաք կռիվ տալով, և ազվան գինվորներին ցրելով տալով՝ առաջանում, հասնում է Սպահան։ Սպահանից էլ փախցնում Ազվաններին և շահ Հուսեյնի թանձաղ անունով մի տղային դառնում են։

Շահազունին պահել էին Սպահանում։

#### ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԵԿԵՐՐՈՐԴ

Շահ Հուսեյնի տղին թանձաղին շահ են կարգում շահ թանձաղ անունով և նրան հավատարմութիւն ուխտում։

Հաղիվ տասներեքուկես կամ տասնը չորս տարեկան մի ազնիվ, անարատ, վիզը երկար, աչք ու հոնքերը սև մի ծաղիկ էր։

Հաղիվ թե այսքան վաղելուց մեկը նրա տած լինի պահում։ Մենք նրան չենք տեսել, բայց Սպահանում մեզ ցույց տվին նրա նկարը և աշխարհին է, ոնց վերեր պատկերացրի։

Թանձաղ Ղուլիի աներ՝ Խորասանի խանը վեզիր է լինում շահ թանձաղի մոտ, և այս առիթով իր փեսա թանձաղ Ղուլիին խանութքան տիտղոս է շնորհել տալիս։

Երբ Մյուրփեյիզը [ազվանները] գրաված է եղել Սպահանը, ինչքան գանձ ու հարստութիւն է եղել Սպահանում, բոլորը քաշել տարել է Ղանտահար։

Մյուրփեյիզի ոսկերչապետի հետ տեսնվեցի Սպահանում։ Մա Զուղաեցի մի ծերունի հայ էր, արհեստով ոսկերիչ։ Շատ էինք տեսնվում ու խոսում։ Նա իր պատմութիւնը լալով էր պատմում։



«Երեսուն պատման շահի քարով գոհարեղենը ձեռքերովս տեղափոխեցի: Թե ապամանդը և թե հակինթը, լալն ու դմբուխալը ինքս ոսկիների վրայից հանեցի, վերցրի մի պարկի մեջ և իմ ձեռքերով կշռեցի երեսուն պատման շահառաջիով գոհարեղեն»: Թե հարց տաս շահառաջին ինչքան է. — ամեն մի պատմանը չորս ու կես օխա է (ուրեմն  $1^{\circ}$  օխա = 1,280 կգ 1 պատման = 5,770 կգ.  $5,770 \times 30 = 173$  (հարյուր յոթանասուն երեք կիլոգրամ գոհարեղեն):

Ինչպես տեսնում էք Մյուսթեյիզը ինչ կար-կշար կողոպտել տարել էր: Հիմի տեսնենք, թե Թահմազ Ղուլին աները առանց փողի ինչ պիտի անե, շատ էլ վեղիբ կղալի:

Ի միջի ալլոց շատ լուրջ մարդ է լինում այս վեղիբը, միևնույն ժամանակ խոստումնապահ և քաջ: Նրա ուժը ցույց տալու համար պատմում են, որ գորդի կամ կարպիսի՝ ծաղիկները եթե ուղենա հանել, երկու մատով մի անդամից ախպես հարվածում էր ու ծակում, որ կարծես մկրատով կարված լինի: Ահա այսպիսի ուժի տեր է եղել Թահմազ Ղուլին աներ, Սորասանի խան, այժմյան վեղիբը:

Վեղիբը որոշ ժամանակ մտածում է փող հարկիս մասին: Առանց փողի գործ չի լինի: Վերջապես ոռճիկ պետք է տալ: Բացի դրանից Օսմանյու հետ խռով, Մոսկովի հետ խռով, առանց փողի ոչինչ չի կարող անել: Մտածում է, որ Հնդկաստանի շահի հետ բարեկամ է, գիտեմ է շահ Թահմազին թե. — Շահ, այսպես առանց փողի չի լինի, մի քանի նահանգներ Օսմանյին է դրավել. մի քանիսն էլ Մոսկովյին, առանց փողի գործ չենք կարող անել:

Շահ Թահմազը պատասխանում է՝

— Ես ինչ գիտեմ, ես թերահաս և խամ մարդ եմ, դու գիտես:

Թահմազ Ղուլին աները ասում է՝

— Այ շահ, արի դու ինձ որպես դեսպան Հնդկաստան ուղարկիր, գնամ մուրհակով մի քիչ փող վերցնեմ, որպեսզի ղինվորների ոռճիկը տանք թշնամու ձեռքն անցած նահանգները ազատենք: Հետո աստված մեզ կրթ որ տվեց, մենք էլ այն ժամանակ մեր պարսքը Հնդկաստանի շահին կտանք:

Շահ Թահմազը հարցնում է՝

— Լավ, համաձայն եմ, բայց դու որ գնաս վեղիբությունը հիվ պիտի կատարի: Վեղիբը պատասխանում է՝

— Թահմազ Ղուլին վեղիբ կարգենք, իմ փեսա է:

Շահը կանչում է Թահմազ Ղուլին և խոսքը նրան ուղղելով ասում՝

— Թահմազ Ղուլի, քեզ վեղիբ կարգեցի:

— Ես այդպես ի միջի ալլոց վեղիբ չեմ լինի, պատասխանում է Թահմազ Ղուլին:

— Ինչո՞ւ:

— Տուր ինձ թագավորական հրամանագիր այն մասին, որ իմ գործիս ոչ ոք չպետք է միջամտի, և ես պետք է ղեկավարեմ այնպես, ինչպես ինքս եմ հասկանում:

— Լավ, — ասում է շահ Թահմազը և տալիս է նրան պահանջած թագավորական հրամանագիրը: Բացի դրանից, իր գլխից մի վարսակալ հանելով, գնում է Թահմազ Ղուլի գլխին՝ ասելով. «Թող սրանից հետո քեզ անվանեն «Թահմազ Ղուլի»: Եվ նաև տալիս է մի ախպիսի թագավորական հրամանագիր՝ որով ինքը, շահը պարտավորվում է. «Եթե ես անգամ քո համաձայնությամբ չչարժվեմ, ինչ նախատիրքով ուզում ես՝ ինձ էլ նախատիրք»:

Թահմազ Ղուլին լինում է վեղիբ:

Աներոջ համբուրդական պատրաստությունները հողալով՝ նրան համբա է գնում:

Աները վեց-եոթն օրվա համբա է գնում չի գնում, Թահմազ Ղուլին նրա հետևից մարդ է ուղարկում և մի հնարքով աներոջ գլուխը բերել տալիս:

Բոլոր խաները, բեյերը տեսնելով, որ իր խան աներոջ գլուխը կարել տվեց սկզբում են սարսափել այս մարդուց:

[Եվ իսկապես] Թահմազ Ղուլին սկսում է ինքնավստահ, համարձակ խաներին և բեյերին կամաց-կամաց, մեկիկ-մեկիկ, ամեն մեկին մի պատրվակ կապնելով՝ սպանել տալ: Ուստի նկատի է առնում, սպանում է: Վերջապես հին խաներից, բեյերից մարդ չի թողնում. մեկիկ-մեկիկ, մեկ-մեկ պատճառով սպանում է: Եվ եթե անկյուններում հատ ու կտոր մնում են, էլ նրանց կարեւորություն չէր տալիս, էլ չէր վախենում:



եւ աշտպիսով պարսկական պետութիւնը վերցնում է իր ամբի մեջ:

Օսմանցու հետ կռիվ տալիս, ջարդում-ջարդվում. Մոսկովցու հետ Գիլանում, կռիվ տալիս ջարդում-ջարդվում, վերջապես չեղարացնենք:

Բայց պիտի հարց տաք, թե ինչով էր կոտորածը երկիրը: Ռուսերից էր տալիս զինվորի ոռճիկը:

Բոլոր վաճառականներին և հարուստներին թալանում է, ժողովրդի աղքատքն ու կայքը զրավում: Որ իմանում է, թե մեկը հաղար քսակ փող ունի, անմիջապես կանչել տալիս, քսակով փողը առնում և՛ միջից մի հարյուր դուռուշ վերադարձնելով՝ ասում «Գնա, դու էլ սրանով յոլա դնա»: Ահա աշտպիսով գործի ոռճիկը տալիս էր:

Երբ Քանաք շահի հետ Քանաք Դուռին օսմանցիների դեմ կռիվ է գալիս, մի բուր է հասնում Քանաք Դուռին, թե՛ «ինչ ես կեցել, աղվանք քայլում է Խորասանի վրա մեծաքանակ զորքով»: Քանաք Դուռն էլ շահ Քանաքին ասում է, — զգուշացիր, մինչև իմ գալը օսմանցու հետ կռուի միտուր, դնամ աղվանները ցրիվ տամ, վերադառնամ ու միասին կռիվ կտանք [անպայման] հետդ լինեմ:

— Որ օսմանցին հարձակվի, ես պիտի կանգնեմ. — հարց է տալիս շահ Քանաքը:

— Օսմանցին ինքը մեր վրա չի հարձակվիր մինչև մենք նրա վրա չի հարձակվենք. — պատասխանում է Քանաք Դուռին:

— Լավ, մինչև քո գալը ես Օսմանցու հետ կռիվ չեմ անի. — ասում է շահ Քանաքը, — և միամտացնում Քանաք Դուռին:

Քանաք Դուռն գնում է Խորասանը աղվաններից ապառնելու, իսկ շահ Քանաքը [հակառակ իր խոստումին] քշում է Օսմանացու վրա: Օսմանացին շահ Քանաքին աջակց է կոթում, որ խափական թագավորական խայտառակութուն (շահ պողկունու): Շահ Քանաքը ձիով փախչելիս ձիուց ընկնում է և չի կարողանում վեր կենալ. մի օսմանցի [զինվոր] ուղղւմ է նրան խփել բայց Բաղդատի վալի Ահմետ փաշան հանդիմանում է նրան, ասելով. «ձեռքդ քաշիր խող, նա շահ է, դու իրա-

վունք [առիճան] չունես նրան ձեռք վերցնելու, գնդակ տրճակելու»:

Վերջում պարսիկները մեծ զփարու-թյամբ ձի են հասցնում և աղաւաւում շահին:

Այս գեղքը պատմեցին պարսիկները, երբ ես Սպահանում էի: Նրանք էլ բախկանին վնասվել ու տուժել են այս խուճապի ժամանակ:

#### ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ

Այս միջոցին Քանաք Դուռն Խորասանում ցրում է աղվաններին և վերադառնալով՝ տեմում է, որ շատ խայտառակ կերպով են պարավել: Մտում ռի է պահում շահ Քանաքի դեմ և սկսում է նենգութուն մտածել: Գիշեր-ցերեկ մտածում է, թե որչոք ձնց անի, որ սրան (շահ Քանաքին) մեջակից վերացնի:

Այսպես մտածելիս՝ մի միտք է հղանում, մի խորամանկութիւն, և ինքն իրեն խոսում է. «Քանաք Դուռն հիմա դու սրան խմիչքի վարժեցրիր, մի օր սրան մի լավ խմացրու և բոլոր մեծամեծներին, խաներին, բեգերին հավաքիր ու մի կերպ մի բան ձեռակերպիր»:

[Հարմար] ժամանակը որ հասնում է, ինչ անում-չի անում, Իրանի իշխանութիւն բոլոր նահանգներում, գավառներում ինչ-քան գործի ընդունակ, ձեռներեց, աղղկիկ մարդիկ որ կան, բոլորին մի հանդամանքով պահանջում և պարտափորացնում է այսինչ ամսի, այսինչ օրը Սպահանում ներկա լինել: Այս հրամանագիրը սուրհանգակով ամենքին հասցնում է, այնպես, որ որոշված ժամկետին բոլորը Սպահանում ներկա են լինում:

Մինչ սուրհանգակը մարդկանց կանչելու էր շտապում, այստեղ Քանաք Դուռն ասում է շահ Քանաքին. — Շահ, քեզ հետ հինգ-տասն օր ուղում եմ քեֆ անենք, այնպես, որ սեղանը մեջակից խկի չըհա-վաքենք, ոչ մի խնդրադրի չհայենք, եկող խնդրատուներին էլ վոնդենք: Հինգ-տասն օր մենք մեզ քեֆի տանք, ամբողջ օրով խմենք և հարբած մնանք, սա էլ մի գործ է:

Շահ Քանաքը հավատում է և խաբվում, նրա համար, որ Քանաք Դուռն իր մեծ աղին ամուսնացրել էր շահ Քանաքի քրոջ



հետ. ուրեմն և խնամիրներ էին, նրան թը-  
վում էր, որ կասկածելն ավելորդ է, կամ  
թե իսկի էլ չի կասկածում, որ տակը մի  
նենգություն կարող է լինել:

Այսպես, ուրեմն, որեւէ նենգություն  
չսպասելով թահմազ Դուլիից, շահ թահմազը  
խարվում, համաձայնվում է թահմազ Դու-  
լիի նենգավոր առաջարկին:

Մինչ սուրհանդակները հրամանագրեր  
են բաժանում, այդ օրերում սրանք սկսում  
են քեֆը: Շահ թահմազը սկսում է կոնծել:  
Հինգ բաժակի տեղ տառն է խմում, տասի  
տեղը տասնհինգը, իսկ թահմազ Դուլին հա-  
տալիս է բաժակը հա խմեցնում: Ինքը թա-  
մազ Դուլին էլ է խմում [բայց] շահին ոչք  
բռնալ չի տալիս:

Այս այսպես շարունակվում է մինչև այն  
ժամանակ, երբ պետութեան ամեն կողմից  
կանչված մարդիկ՝ մեծամեծներ, խաներ  
հավաքվում են Սպահանի «Սեյտապատ»  
կոչված հայտնի տեղը: Այս Սեյտապատը  
ձեզ պատկերացնելու համար՝ ասեմ օրինակ՝  
Պոլսո «Քյադրա խանեն»: Այսպես զրոսան-  
քի տեղ է, հովալի և կանաչադարդ: Ես էլ  
գնացի ման եկա, աչքերովս տեսա այս  
զրոսավայրը—կանաչ թափշանման, հրաշալի  
հրապարակով, գեղեցիկ և նրբակերտ մի  
քյոշկ ունի. ահա այս քյոշկում էլ նրանք  
խմելիս են լինում, երբ այս Սեյտապա-  
տի հրապարակում հավաքվել են նահանգ-  
ներից, գավառներից կանչված ավազա-  
նիրներ, խաներ, բեգեր իմաստուններ—բո-  
լորն էլ պետական փորձառութեամբ մար-  
դիկ, անտեղյակ թահմազ Դուլիի նպա-  
տակին:

Թահմազ Դուլին մեն-մենակ դուրս գա-  
լով քյոշկից և աչքի անցնելով հրապարակը,  
—Եղբորդ էլ եկել էք,—հարցնում է:

—Այո մեր խան, եկել ենք,—պատաս-  
խանում են:

—Գիտե՞ք՝ ձեզ ինչի համար եմ կանչել:

—Ոչ, պատճառը չգիտեմք խան,—պա-  
տասխանում են բոլորը միաբերան:

Թահմազ Դուլին առանց ուշադրութեան  
դարձնելու նրանց պատասխանին, մտնում  
է քյոշկ և մի քանի բոպի հետո դուրս  
է գալիս գրկած շահ թահմազին և թող  
տալիս կանաչի վրա՝ բոլորովին հարբած:

Շահ թահմազը խելակորույս վիճակում  
պառկում է կանաչի վրա, վարտիկ-շապիկը  
փխտուկի մեջ, վրա դուխաբ կեղտոտ, թաղը  
զլխից մի կողմ ընկած:

Թահմազ Դուլին սկսում է ճառել՝

«Պաներ, բեգեր, մեր այս շահից դուք  
սպասում եք նահանգների բարեկարգու-  
թյուն, մեր այս շահի զեկավարութեամբ  
մեր նահանգները թշնամիրներից պիտի ա-  
ղատե՞ք, նրանց հաղթե՞ք, հետապնդե՞ք և  
հետո ընտանիքով երեխաներով պիտի  
հանգիստ կյանք վայելե՞ք...»

Ներկաներից ոչ մի խոսք չէր լսվում:

Շահ թահմազի այդ խայտառակ վիճակը  
տեսնելուց՝ նրանց զգվածքն էր առաջացել:

Թահմազ Դուլին նորից սկսում է իր  
խոսքը՝

«Մեր այս շահը զեռես երիտասարդ է,  
զեռես անփորձ է (ճահել), երեխա է: Ես,  
եթե դուք համաձայն կը լինեք, սրան բան-  
տարկած պահեմ, մինչև որ դարձյալ ձեր  
օգնութեամբ մեր նահանգները թշնամիրնե-  
րից մաքրենք: Հետո, մինչև այդ մեր շահն  
էլ խելքի եկած կը լինի, նորից իր գահի  
վրա կընտանցենք»:

Այս խոսքերին բոլորն էլ համաձայնու-  
թյուն են տալիս:

Երբ այսքան մարդու համաձայնութեանը  
ստանում է թահմազ Դուլին, անմիջապես  
մի կառքի, թե մի պատգարակի մեջ գնել  
տալով Շահ թահմազին, ուղարկում է Սոր-  
զիվար քաղաքը՝ բանտարկութեան: Ուրիշ  
նահանգների մարդկանց չվտանգելով, իր  
բարեկամներից և հայրենակիցներից հազար  
հոգի շահ թահմազի վրան հսկող է նշանա-  
կում: Մի քանի օր անց նրա կնոջն ու երե-  
խաներին էլ նույն տեղն է ուղարկում:

Երբ շահ թահմազի խելքը գլուխն է  
գալիս, հարցնում է հաղարապետին. — Ինձ  
ո՞վ է տեղափոխել: Հաղարապետը պատաս-  
խանում է. — Կալանավորված եք, շահ:

Շահ թահմազը հասկանում է, թե ինչ  
տալազ է սպասում իրեն, բայց ինքնիրեն  
անտարբեր է ձևացնում և լուռ:

Այն հաղարապետը, որի հսկողութեան  
էր հանձնված շահ թահմազը, թահմազ Դու-  
լիի հայրենակիցն ու բարեկամն էր:

Ե, ուրեմն կտալվորութեանը մնում է թահ-



մաղ Ղուլիի ձեռքում: Պատերազմ է սկսում օսմանցիի դեմ, Մոսկովի դեմ: Զարկում զարկվում: Օսմանցիի հետ հաշտութեան լեզու գտնում, գերիները պահանջում: Օսմանցին էլ կամավոր կերպով հանձնառու է լինում վերադարձնել թե՛ գերիները և թե՛ գրաված բերդերը: Գիւլանն էլ գրավում է Մոսկովցիներին:

Օսմանցիների հանձնելիք բերդերից նրանք, որոնք գինվորական պահակներ են ունենում, չեն ուզում բերդերը հանձնել՝ պատճառաբանելով, որ «այս բերդերը մեր աշրունով են գնված», շատ էլ թաղավորը (փառիշահը) տվել է, մենք չենք տա:

Թանձաղ Ղուլին նրանց հետ պատերազմ է սկսում: Փառիշահից նորից հրամանագիր է ուղարկվում բերդերին, որից հետո, նոր միայն հանձնում են: Թանձաղ Ղուլին էլ դեսպանութիւն ուղարկելու [Պոլիս] պատրաստութիւն է տեսնում:

Թանձաղ Ղուլին այնուհետև իր գինվորը քաշում տանում է Մուղանի անապատը:

Մուղանի անապատում չորս-հինգ հազար թուրքացի՝ իրան մերձավոր մարդկանց խրատում է, որ ինքը այսպես-այսպես մի «գործի» պիտի ձեռնարկե, դուք «այսպես-այսպես» արտահայտվեցեք:

Այսպես նրանց «խրատելուց» հետո դարձյալ հրամանագիրներ է ուղարկում շրջաններին, մեծամեծներին, վազիրներին, խաներին, բեկերին, մեկ-մեկ էլ ազդեցիկ նահանգական ավագանիներին, որ դան հավաքվեն Մուղանի անապատը:

Եվ հավաքվում են: Հավաքվում են և զգուշութեամբ սպասում:

Թանձաղ Ղուլին կարգադրում է, որ մեծամեծները, մեծամեծների, խաները-խաների և բեկերը-բեկերի կողքի կանգնեն և սպում է.

— Չեղ ինչի համար կանչել տվի գիտեք:

— Չէ, չգիտենք իման, — պատասխանում են բոլորը միաբերան:

Թանձաղ Ղուլին սկսում է.

«Ահա վասիլ մեր նահանգներից թշնամիներին հանեցինք: Այսուհետև կարգ ու կանոն է: Ապահովութեանը կատարյալ է բեկեր, գնացեք մեր շահին հանեք [բանտից].

ես էլ գնամ իմ նահանգը մի քիչ հանգրստանամ»:

Թուրքացիին սկսում է գողգողալ, սպահանցին սկսում է լալ, մեց որ թանձաղ Ղուլին «խրատել» էր, թե «Տեր իմ՝ դու մեզ թողնելով՝ ուր պիտի գնաս, մենք միայն քեզ ենք ճանաչում, մեր հայրն էլ դու ես մեր մեծն էլ, մենք ուրիշ շահ էլ չենք ճանաչում, դու ես մեր շահը...» այսպես սկսում են աղմկել ու լալ:

Երբ այս պատասխանը բոլորը լսում են՝ տառը հաղար հոգի էլ նրանց կողմն են անցնում:

Բայց մյուս կողմից՝ մեծամեծներից, խաներից, բեկերից ոմանք տառն են. — «Լինելու բան է այս, քանի շահը կա, այդպիսի բան չի կարող լինել: Կարելի՞ բան է, որ այս պարզամիտը [սամիկը] շահ լինի, քանի որ ինքը շահագուսն չէ:

Թանձաղ Ղուլին լսում է իրեն չուզողների առարկութիւնները: Բայց այդ ժողովում (հավաքույթում) նրանց դեմ ոչինչ չի ասում, այլ այդ սիր իր սրտումը պահում: Իրա կողմնակիցներին դառնալով՝ նորից հարցնում է.

— Ինձ ուզում եք:

— Այո ուզում ենք, — ասում են նրանք.

— Եթե ուզում եք, մեկ-մեկ մուրհակ [ստորագրութիւն] տվեք ինձ, — ասում է Թանձաղ Ղուլին:

Ուզողները ստորագրութիւն են տալիս, աղոթքն էլ կատարում և Թանձաղ Ղուլին իրենց շահ հայտարարում:

Իսկ չուզողներին Թանձաղ Ղուլին սրի է քաշում:

#### ՊԼՈՒԽ ՏԱՄԱՐՆԵՐԵՐՈՐԴ

Մի դրամականիք (դրամի վրայի գրութիւն) է փորագրել տալիս, ուր գրված էր (Սիքքեի պեր գեր Սելաթինի հիհանի շահի շահան նաաիրը սահապի քըրան) «Աշխարհի սուլթան, շահերի շահ, հազվագյուտ բախտավոր» և նրանից հետո ինքն իրեն անվանեց նաաիր շահ: Այդպես էլ անվանում են նրան:

Շահ լինելու, տառերիկու տառերկան մի աղջիկ է ունենում, որին խեղդել է տալիս և ինչքան աղջիկ զավակ է ունենում



բոլորին էլ խեղդել է տալիս, որպեսզի չլինի ամուսնանան և քուսակի մեկի գերկը մանեն, այնքան նա խանդոտ է լինում։ Իսկ տղաներին պահում է։

Բուն ցանկություն գալով գեղի գահը [շահական] Մուղանի անապատից զորքը քաշում գնում է Սպահան։ Այստեղ նկատում է, որ Սպահանցիք զժգոճ են ինքն իրեն շահ հայտարարելուց և սկսում են գաղանի խորհրդակցություններ (խմորում, խլրտում)։

Թահմազ Ղուլին երբ տեսնում է, որ Սպահանցիք իրեն չեն ուզում, իր մեծ աղի ծծկեր երեխային մոր դրկից բերել տալով և գահի վրա նստեցնելով՝ հավատարմության երդում է տալիս երեխային։ Վերջապես, չէ՞ որ երեխայի մայրը շահի քույրն էր, ահա և շահի սերունդից։ «Ինձ չէ՞ք ուզում, ահա ձեզ շահ սրան խո ասելիք չունեք, — ասում է Թահմազ Ղուլին Սպահանցիներին։

Երեխայի անունով փող է կտրել տալիս։ Իսկ երեխան աամբոճինդ-աամբոճից աստական, ծիծ է ուզում, լալիս է, մորն է ուզում։

Թահմազ Ղուլին երբ այս երեխային գահ է նստեցնում, հրապարակային առյառնի (հավաքույթի) է կանչում բոլոր խաներին ու բեյերին։ Մինչ երեխան լալիս ծիծ է ուզում, Թահմազ Ղուլին նրա լացը թարգմանելով ասում է. «Գիտե՞ք ձեր շահն ինչ է հրամայում. բարեկամիս բարեկամ եղեք, թշնամուս-թշնամի։ Ես նրանց առձիկ կտամ, թող ինձ լավ ծառայեն ասում է ձեր շահը»։

Երեխային մի քանի օր շահ կարգելով, Սպահանում գտնվող իրեն հակառակորդներին (բողոքողներին) բոլորին մաքրում է այնպես, ինչպես աղվեսը հավաքուն մանուկիս և՛ ոչ մի հավ ողջ չի թողնում։ Այդպես էլ Սպահանում իրեն չուզողներից ոչ մեկը նրա ձեռքից չի պրծնում, հրապարակը «մաքրում» «ասկում» է [թշնամի չի թողնում], և նորից ինքնիրեն շահ հայտարարում։

Շահ լինելուց հետո չորս օր մունհաթիկ է կանչել տալիս։ Առաջին օրը կանչել է տալիս, թե՛ «որ շահը հարցնելու լի-

նեք, շահը հարյարի է»։ Երկրորդ օրը կանչել է տալիս, թե՛ «շահը զրդը-բաշ է»։ Երրորդ օրը կանչել է տալիս, թե՛ «շահը հայ է»։ Չորրորդ օրը կանչել է տալիս, թե՛ «շահը հրեա է»։ Ահա իր մասին այսպիսի հայտարարությամբ չորս օր մունհաթիկ է կանչել տալիս Թահմազ Ղուլին։ Հինգերորդ օրը Սպահանի բոլոր դասակարգերը (էմնաֆ) առյառնի (հավաքույթի) կանչելով. — «Չորս օր է մունհաթիկ եմ կանչել տալիս. լսեցի՞ք», — ասում է։ Հավաքվածները պատասխանում են, —

— Այո, շահ, լսեցինք։

— Ինչու կանչել ավի այդ մունհաթիկներին գիտե՞ք։

— Ձե, չգիտենք, — պատասխանում են բոլորը։

Այն ժամանակ Թահմազ Ղուլին բացատրում է, Վերա համար կանչել ավի մունհաթիկը, որ երբ ասում էր, թե շահը հարյարի է, հարյարիները զրդը-բաշներին թալանեն։ Կամ թե երբ կանչել ավի թե՛ «շահը Ղզրաշ է, զզրաշները հարյարիների ունեցվածք թալանեն»։ Կամ թե երբ կանչել ավի թե՛ «շահը հայ է, հայերը թալանեն մյուսների ունեցվածքը»։ Կամ թե երբ կանչել ավի թե՛ «շահը հրեա է, հրեաները թալանեն մյուսների ունեցվածքը»։

«Ձինի, որ զրդը-բաշը հարյարիին նեղություն տա և կամ հայը զրդը-բաշին, հարյարիին, հրեային նեղություն տա կամ հրեան զզրաշին, հարյարիին, հային նեղություն տա։ Ահա ասելիքս քուսակներ։ Գնացեք ախրոր նման ապրեցեք, թե ոչ գլուխներդ շան գլխի նման կը կտրեմ ու առաջնիդ կնետեմ», — ասում է Թահմազ Ղուլին և վստեղում է նրանց իր [մեծության] ներկայությունից։

Ահա Թահմազ Ղուլիի շահ դառնալու պատմությունը, այնպես, ինչպես լսեցինք ու գրի առանք նրա հորեղբոր աղայի պատմածով։

#### ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵԶՈՐՍԵՐՈՐԳ

Հիմա ձեզ պատմենք, թե Թահմազ Ղուլին ինչպես է սպանում շահ Թահմազին։

Մենք նախապես հիշատակեցինք, որ Հրնդ-



կատանից դարձին, Հերաթ քաղաքում ճամբու դրվեցինք և քաղաք առ քաղաք գնալի Պալիս ենք առաջանում:

Մեր ճանապարհի վրա է եղել Մապղիվար քաղաքը: Մտանք ներս և մի քանի օր այս քաղաքում մնացինք:

Մի պարսիկ ազնվականի հետ ծանոթացանք—բարեկամացանք: Դու մի տալի այս պարսիկ ազնվականն էլ, Միրզա-Ալի անուհով՝ նվագի սիրահար է եղել: Մեզ պատմեց, թե ոնց է ուղանվել շահ Քահանազը:

— Քեզ կը պատմեմ նրա համար, որ դու օտմանցի հայերից ես, գաղանիք կը պահես. այն ինչ Պարսկաստանի մահմետականն էլ, հայն էլ ծայր-աստիճան բանասերիւ են լինում:

— Մկզբում, — սկսեց պատմել Միրզա-Ալին, — դուք որ Դանտահարից Հնդկաստան էիք գնում, Քահանայ Դուլին ճրտեղ կանչեց իր մոտ իր մեծ աղին: Ես պատասխանեցի, թե Քապուլ քաղաքը գրավելուց հետո եկավ աղան: — Ի՞նչ պատճառով կանչեց, — հարցրեց Միրզա-Ալին: Մենք պատասխանեցինք — այն գիտենք միայն, որ աղին տեսնելիս, հրապարակով ասաց՝ «Տղան, ես Հնդկաստան եմ գնում. քեզ հետ այստեղ մի քիչ միասին մնամ ու կարոտս առնեմ» — ասաց ու հետը կանանոց տարավ: Մեզ միայն այսքանն է հայտնի թե կանանոց գնալուց հետո նրանց միջև ինչ գաղանի խոսակցութիւնն է եղել, այդ ոչ ոք չգիտի: Որ հարցնես, թե աղան ինչ գործի վրա էր. — քսան երեսուն հազար ձիավորով նահանգ առ նահանգ ման էր գալիս, վերահսկողութիւնն էր անում իշխանաց իշխան տիրադոսով: Մենք մտածեցինք, որ ինչ պիտի լինի նրանց խոսակցութիւնը, քանի որ ինքը Հնդկաստան է գնում, պիտի պատվիրէ, որ նախագահներին լավ հսկի: Մենք մեր խելքով այսպես դատեցինք, ասացի:

Միրզա-Ալի բարեկամս մեզ այսպես պատասխանեց. — Այո, վարդեա Աբուլիւն, ճիշտ ես. բայց հենց այդ կանանոցում էլ պատվիրել է, որ կը գնաս շահ Քահանային կողանես, որպեսզի տապաքեղը քեզ մնա տղաս. ինչու որ ես Հնդկաստան եմ գնում, ով գիտե կարող է և չվերադառնա:

Ահա այն ժամանակ, երբ դուք Քապուլից ելնելով Թայրերի կերճն էիք հասնում,

աղան էլ Մապղիվար հասավ, բանակ դրեց քաղաքից դուրս:

Կանչում է իր հազարապետներից մեկին և ասում. — Գնա շահ Քահանայի աղին ու կընոջը կանանոցում սպանիր. իսկ շահ Քահանային էլ առավոտը շուտ մի քանի ժամվա ճանապարհ տար և այնտեղ սպանիր: Այդ հազարապետը պատասխանում է.

«Քապուլիցի, ես շահ Քահանայի հացով եմ մեծացել-կշտացել, իմ արջան մեջ շահ Քահանայի հացը կա. ես նրան պարտական եմ. ալիքի լավ է դու ինձ սպանես քան թե այդպիսի գործի ուղարկես:

Ձեք շահ հայրը [մերժումս] լսելով ինձ պիտի սպաննե չէ՞. թող սպաննե. ես այդ մարդու վրա սուր չեմ կարող բարձրացնեմ:

— Իմ խոսքը չեմ անում գովաճան, քուռակ, — հանդիմանելով նեղանում է Քահանայ Դուլին աղան: Բայց հազարապետը չի ազդվում, մնում է անտարբեր:

Հետո Քահանայ Դուլի աղան Թուրասանի բրդերից մի քուրդ հազարապետ է կանչում և նրան նույնը հրամայում: Այդ քուրդ հազարապետը համաձայնվում և պատասխանում է. — Պան իմ կողանեմ:

Եվ այս քուրդ հազարապետը մի քանի հոգով գալիս մանում է շահ Քահանայի կանանոցը: Վշտահար շահ Քահանայը կռահում է գլխին գալիքը:

Այս քուրդ հազարապետը շահ Քահանայի աղին ձեռք է առնում սպանելու համար: Ծահ Քահանայը սկսում է աղաչել հազարապետին. — Աման, — ասում է նա. — գիտեմ ինձ էլ, կնոջս էլ պիտի սպանեք, բայց այս 12 տարեկան տղիս մի՞ք սպանի, տար քեզ սարուկ լինի, ծառա լինի. ժամանակ կգա առ ձեզ պետք կգա: Ծառ է աղաչում շահ Քահանայը, որ աղին չսպանեն, բայց այդ անգութ քուրդ հազարապետը չի լսում: Տղին էլ ոնց է աղաչում, — անց օգնութիւն կանչում, այդ տասներկու տարեկան տղին:

Ծահ Քահանայի աչքի տառջ ալի գլուխը կարում են. վերջն էլ կնոջն են բերում մեջ տեղ. կինն էլ հղի, հաղիվ հինգ տաս օր է մնացել որ ծնի. նրա էլ փոքր ձեռքում են: Ծահ Քահանային էլ տանում են Մապղիվարից հեռու գլուխը կարում:

Ահա ինչ որ գաղանաբար և լալով պատ-



րեց մեր բարեկամ Մարգրիտըցի Միքղա-  
Ալին և մենք էլ ոնց որ լսեցինք, այնպես  
գրի առանք այս տեսքում:

Վերադարձի այս ճանապարհին մի բարե-  
գործ իջևան է շինել տվել այս ճանապարհի  
վրա: Մենք էլ այս իջևանում կանգ առանք:  
Իջևանը որոշ չափով ավերվել էր չոր ու  
ամայի շրջանում լինելուց [ոչ բանուկ ճա-  
նապարհ]:

Այս իջևանին սափրան-խան (իջևան—  
քրքում) անունը տվել են, և ամբողջ իջևանը  
քրքում է բուրում: Շինված է արվեստով  
և գեղեցիկ: Մտնող մարդը կը կորչի [այն-  
քան բարդ է]: Քատըրդա-ի (նավահանգիստ  
Պոլսում) նավամատույցից մեծ է և բացի  
դրանից իջևանը իրար նման փողոցների է  
բաժանված: Ասացին որ այստեղ հիմի դո-  
ղեր են ապրում: Մենք էլ շատ մեջը չմտանք  
իսկույն ճամբա քնկանք:

Հասնելով մի քաղաք, մի պարսկից  
հարցրինք այս սափրան խանի մասին և  
մարդը պատմեց հետևյալը.

— Մեր Սպահանում, ժամանակին շատ,  
չափից դուրս առևտրականներ ու վաճա-  
ռականներ են լինում: Սրանց անունները  
Հինդում ու Մինդում հայտնի են լինում:  
Հնդկաստանում մի անվանի վաճառական  
Սպահանի վաճառականների այս հոշակը չի  
կարողանում տանել և ինքն իրեն նեղանու-  
թյով (ջղայնանալով) բաղժաթիվ ուղտերի  
վրա սափրան բեռնում և տալիս է իր ծա-  
ռային, պատվիրելով, որ սա տանի այս ապ-  
րանքը Սպահան քաղաք և ծախի մի մար-  
դու [մի անգամից] միատեսակ փողով:

Ծառան տանում-բերում է Սպահան և  
մաքսը տալով բեռնաթափում մի իջևանում:  
Վաճառականները գալիս հարցնում են, թե  
սափրանը ծախու է:— Այո, ծախու է:— Ինչ  
ես ուղում պաթմանին: Ծառան, թե՛ լրիվ  
առնում էս վաճառականը, թե՛ ամբողջը  
թնչ հմ անելու, այդքան ուժ չունի: Ինչ-  
քան կուզեմ, այնքան կառնեմ: Ծառան թե՛  
ես իմ տիրոջից պատվեր ունեմ որ այս ապ-  
րանքը Սպահան բերեմ մի մարդու՝ մի տե-  
սակ փողով մի անգամից ծախեմ: Պատվի-  
րեց նաև որ չլինի երկու մարդու ծախեմ:

Վաճառականները ծաղր ու ծիծաղով թող-  
նում գնում են:

Տարի ու կես սպասում է, բայց գնորդ  
չի գտնում: Իր տիրոջը լուր է ուղարկում:

Տերն էլ հրամայում է՝ սափրանը Հնդկաս-  
տան ետ բերել: Եվ ծառան բեռնելով ապ-  
րանքը՝ հեռանում է Սպահանից: Դարձի  
ճանապարհին կանգ է առնում այնտեղ, ուր  
այս խանը շինել տվող վաճառականը նոր  
հիմքը փորել տվել, ցեխն է շաղխել տալիս:

— Բեռդ թնչ է, այ վաճառական:

— Սափրան է, պատասխանում է ծառան:

— Որտեղից ես բերում և ուր տանում:

— Հնդաստանից եմ բերել և էլի Հնդկաս-  
տան եմ տանում:

— Ինչու չծախեցիր:

— Տերս պատվիրել էր, որ այս ապրան-  
քը Սպահան տանեմ ու մի մարդու, մի  
տեսակ փողով և միանգամից ծախեմ: Տա-  
րի ու կես սպասեցի Սպահանում և այդպիսի  
գնորդ վաճառականի չհանդիպեցի: Հիմի  
տիրոջս մոտ, ետ եմ տանում:

Խանը շինել տվող վաճառականի սիր-  
տը նեղվում է [այս անպատվությունը չի  
կարողանում տանել]. — Եմ, — ասում է, — քո  
տերը այդպիսի [մեծ] վաճառական է եղել  
(հա): Սակարկում է, կշեռք բերում և թնչ  
տեսակ փող են ուղում, հարցնում է: Ծառան  
պատասխանում է. — չանի, — (չանին Պոլսո փո-  
ղերի նման մի բան է, հազվագյուտ է, չորս  
հատը մի արբասի է): Բոլորը կշռում և  
թափել է տալիս շինվող իջևանի ցեխի մեջ  
և նրա ուղած փողն էլ տալիս ու ասում՝

— Գնա, տեսածիդ պես տիրոջդ պատմիր:

Ահա թե ինչու այդ իջևանի անունը  
«Սափրան-խան» է մնում:

### ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«Գաղմություն թանձաղ Դուրս» տեքստը գտնու-  
մում է Մատենադարանի № 2722 ձեռագրի էջ 34—49  
վրա: Հեղինակն է Թամարուշի Քուչուկ Արուսթիւնը.  
դժգուր թէ ձեռագիրը հեղինակի ինքնագիրը լինի,  
որովհետեւ նա գրված, կամ ավելի ճիշտ արտադրված  
է, 1797 թվին, հեղինակի նկարագրված գեղեցիկ  
62 տառք հետո: Ձեռագրի սկզբի մասում 1—32 էջե-  
րի վրա միեւնույն գրչի ձեռագրով արտադրված է  
«Գաղմություն Արքանամ Կաթողիկոսի Կրեատալոյ»  
աշխատությունը: Ձեռագիրը բաղկացած է 49 է-  
ջից՝ 31.21<sup>1</sup>/<sub>2</sub> մեծության:

Քուչուկ Արուսթիւնի ուսյն պաղմությունը գրե-  
ված է հայերեն տառերով և տառիկներն քառերգի  
նա տառիկներն լեզվով լույս է ածել 1800 թվին Վե-  
նետիկում, որից թարգմանվել է ֆրանսերեն երկու  
հրատարակությամբ:

Հայերեն լեզվով Քուչուկ Արուսթիւնի պաղմու-  
թյունը լույս է տեսնում առաջին անգամ:

Բանասերներից ոմանք այս երկի հեղինակն են  
համարել Սայաթ-Նովային:

Սույն տեքստի հրատարակումը մեր բանասերներին  
հարապոքություն կընձեռի նաև այդ հարցի պարզա-  
բանման համար:

Թարգմանությունը կատարել է Մ. Խորխորունին: